ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

38ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 46 (1896) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 8, 2018
VOLUME 38, NO. 46 (1896) SATURDAY DECEMBER 8, 2018

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Նոր էջ Հայաստանի Առջեւ

Մի քան օր ետք Հայաստանի քաղաքացիները պիտի ուղղուի քուէատուփ, ընտրելու համար յաջորդ Ազգային ժողովի անդամները: Աւելի քան քսանամեակէ մը իվեր առաջին անգամ ըլլալով անոնք առիթը պիտի ունենայ իրենց ազատ կամքով քուէարկելու նախընտրած քաղաքական ուժին ու անհատ թեկնածուներուն:

Դեկտեմբեր 9-ին, իրականութիւն պիտի դառնայ Ապրիլ-Մայիս ամիսներուն տեղի ունեցած ժողովրդային յեղափոխութեան գլխաւոր նպատակներէն մին եւս ու երկիրը պիտի օժտուի նոր ու ներկայացուցչական խորհրդարանով մը:

Նախընտրական քարոզարշաւի առաջին տասը օրերը անցան հանդարտ մթնոլորտի մէջ: Այո, եղան փոխադարձ ցեխարձակումներ, սակայն անոնք մնացին ընդունուած սահմաններուն մէջ: Բացակայեցան նախորդ ընտրութիւններուն բնորոշ ճնշումները, պետական լծակներու օգտագործումը, ցուցակագրումները, անձագրերու հաւաքագրումը ու յատկապէս լայնատարած կաշառք բաժնելու արատաւոր երեւոյթը:

Հեռատեսիլի ալիքներու քաղաքական հաղորդումները բաց են բոլորի առջեւ: Ինքըրնեթային կայքէջերը հասանելի են բոլոր թեկնածուներուն, իսկ մամուլը կը լուսաբանէ մասնակից կուսակցութիւններու ծրագիրները համահաւասար կերպով: Այս բոլորը վստահութիւն կը ներշնչեն, որ յառաջիկայ ընտրութիւնները պիտի ըլլան ազատ, արդար եւ թափանցիկ:

Եւրոպական դիտորդական կազմակերպութիւններու ներկայացուցիչները ընտրարշաւի ընթացքը կը գնահատեն դրական եւ յոյս կը յայտնեն որ, Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան ժողովրդավարութեան միջազգային չափանիշերուն համապատասխանող ընտրութիւններ ու արդիւնքները պիտի արտացոլացնեն բնակչութեան իսկական կամքը:

Այս բոլորը խիստ կարեւոր են երկրի միջազգային վարկի տեսանկիւնէն: Նաեւ կարեւոր են կայունութեան հաստատման, օտար ներդրումներու ապահովման եւ տնտեսութեան շարժամեքենան առաջ մղելու նպատակով:

Այս բոլորի կողքին սակայն կայ մտավախութիւն, որ նախորդ հեռացող համակարգի մնացորդները պիտի փորձեն կարելի եղածին չափ ցեխոտել ջուրերը: Անհաւանական չէ, որ արդիւնքներու հրապարակումէն ետք անոնք հանդէս քան ընտրական գործընթացը կասկածի տակ առնող յայտարարութիւններով ու միջազգային ատեաններու մօտ բողոքներ ներկայացնեն:

Յոյսով ենք սակայն, որ նման փորձերը պիտի մատնուին ձախողութեան ու Դեկտեմբեր 9-ին, Հայաստանի առջեւ պիտի բացուի նոր ու աւելի փայլուն էջ մը:

«ՄԱՍԻՍ»

## Եւրոպացի Դիտորդները Դրական Կը Գնահատեն Նախընտրական Քարոզարշաւի Ընթացքը

*Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները դիտարկող կազմակերպութիւններու եւրոպական ցանցի՝ ENEMO-ի (European Network of Elections Monitoring) յայտարարած են որ, ընտրութիւններու նախընտրական քարոզարշաւի առաջին մասը «հանգիստ եւ խաղաղ էր, հակառակ այն հանգամանքին, որ արձանագրուած են ատելութեան խօսքի դրսեւորումներ»:*

*«Նախորդ ընտրական գործընթացներուն համեմատ՝ մենք կը տեսնենք, որ այս անգամ քարոզարշաւի ընթացքին էականօրէն նուազած է վարչական ներուժի օգտագործումը», - ըսած է առաքելութեան ղեկավար Զլաթքօ Վուչովիչը:*

*Երեւանի մէջ հրաւիրած ասուլիսի ժամանակ Վուչովիչը նկատած է, որ ատելութեան խօսք աւելի քիչ հնչած է, քան կը հնչէ, ըսենք, ժողովրդավարութեան բարձր մակարդակ ունեցող շարք մը այլ երկիրներու մէջ:*

*«Մենք հաճելիօրէն զարմացած էինք, որ այս նախընտրական քարոզարշաւը շատ խաղաղ կ'ընթանար, հաշուի առնելով այն հանգամանքը, որ փոփոխութիւնները եղած էին*


Եւրոպացի դիտորդներու մամլոյ ասուլիսը Երեւանի մէջ

*բոլորովին վերջերս», -նշած է ան:*

*Վուչովիչը անդրադարձած է նաեւ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի (ԿԸՅ) աշխատանքին: Արձանագրած են, որ այս տարի ԿԸՅ-ը նոյն կազմով շատ աւելի լաւ աշխատանք իրականացուցած է, քան նախորդ տարիներուն: «Ազատութեան» հարցին ի պատասխան՝ առաքելութեան ղեկավարը ըսած է, որ այս փոփոխութիւնները տեղի ունեցած են իշխանութիւններու դրսեւորած քաղաքական կամքի շնորհիւ:*

*«Այս օրինակ է, թէ ինչպէս քաղաքական կամքը կրնայ նման ազդեցութիւն ունենալ ընտրական գործընթացներուն վրայ միեւնոյն*

Շար.ը էջ 5

## Արժանթինի Մէջ Էրտողան Կրկին Հերքած է Հայոց Ցեղասպանութիւնը



Արժանթինահայեր կը բողոքեն Թուրքիոյ նախագահի այցելութեան դէմ

*Պուէնոս Այրէսի մէջ կայացած տնտեսապէս ամենէն ուժեղ երկիրներու՝ G20-ի գագաթի ժողովի շրջանածիրէն ներս տեղի ունեցած մամլոյ ասուլիսի ժամանակ լրագրող մը, որ ինքզինք համարած է Հայոց ցեղասպանութեան զոհերու ծոռ, Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Էրտողանին հարց ուղղած է, թէ արդեօ՞ք ժամանակը չէ, որ Թուրքիան ընդունի հայերու դէմ իրականացուած ցեղասպանութիւնը:*

*Պատասխանելով՝ Էրտողանը հերքած է ցեղասպանութեան փաստը եւ աւելցուցած, թէ կարելի չէ Թուրքիան մեղադրել ցեղասպանութիւն իրականացնելու մէջ եւ պնդած է, որ հարցը պէտք է ձգել պատմաբաններուն:*

*«Մենք միշտ մարդկային վերաբերմունք դրսեւորած ենք այլազգիներու նկատմամբ: Թուրքիոյ մէջ կ'ապրի 100,000 հայ, որմէ 30 հազարը բնիկներ են: Միւսները եկած են Հայաստանէն եւ փաստաթուղթ չունին: Մենք չենք արտաքսեր անոնց», յայտարարած է Թուրքիոյ նախագահը:*

### Արժանթինի Հայերը կը Բողոքեն Էրտողանի Այցի Դէմ

*Միւս կողմէ, Արժանթինի հայերը բողոքած են Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Էրտողանի այցի*

Շար.ը էջ 5

## Հայաստանեան Կեղծ Բժշկական Վկայականներու Հարց Իսրայէլի Մէջ

*Իսրայէլի մէջ ձերբակալուած են ազգութեամբ 40 արաբ բժիշկներ, ատամնաբոյժներ, դեղագործներ եւ զանազան բժշկական հաստատութիւններու մէջ աշխատող ու վերաորակաւորում անցնող մասնագէտներ, որոնք բժշկական կրթութիւն ստացած են հայաստանեան ոչ պետական համալսարաններու մէջ՝ «Հայբուսակ» համալսարանի, Սուրբ Թերէզայի անուան բժշկական համալսարանի եւ «Մխիթար Գօշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի մէջ:*

*Ոստիկանական գործողութիւնը, որ կը կրէր «Սպանութեան արտօնագիր» խորագիրը, մեկնարկած է դեռ մէկուկէս տարի առաջ: Բոլոր բերման ենթարկուածները կը կասկածուին Հայաստանի վերոյիշեալ կրթական հաստատութիւններէն կեղծ վկայականներ ձեռք բերելու մէջ: Շարք մը բժիշկներ նոյնիսկ անցած են Իսրայէլի առողջապահութեան նախարարութեան վերաորակաւորման եւ վկայականներու հաստատման քննութիւնները:*

*«Մինչ իւրաքանչիւր դիմումի ներկայացումը մենք դիմած ենք Իսրայէլի ներքին գործոց նախարարութիւն, որպէսզի ստուգուին ելքի ու մուտքի*

*ժամկէտները, ու վկայական-*

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Իրավիճակ, Որ Ստեղծուեց Նիկոլ Փաշինեանի Յայտարարութիւնից Յետոյ

*Արցախի նախագահ Բակօ Սահակեանը այդպէս էլ հրապարակաւ չարձագանքեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ իրեն ուղղուած յորդորներին: Խօսքը Գեղարքունիքի մարզում «Իմ քայլը» դաշինքի նախընտրական քարոզարշաւի ժամանակ Փաշինեանի ելոյթի մասին է. «Ես, ընդհանրապէս, վերջին օրերին, անկեղծ ասած, լաւ չեմ հասկանում ԼՂՀ իշխանութեան ներկայացուցիչների ակտիւութիւնը: Էդ ինչի՞ են ակտիւացել եւ ինչի՞ են տարբեր մեկնաբանութիւններ անում եւ ինչի՞ են փորձում որեւէ ձեւով խառնուել եւ իրենց ներկայութիւնը ցոյց տալ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնների քարոզարշաւի ընթացքում: Ես պարոն Սահակեանին յորդորում եմ, որ կարգի հրաւիրի իր կառավարութեան ներկայացուցիչներին եւ իրենց ուղարկի իրենց աշխատանքով զբաղուելու: Ղարաբաղի նախագահի մամուլի խօսնակը օրը մէջ իմ ասածի վերաբերեալ մեկնաբանութիւն է տալիս: Այ քեզ բա՜ն: Սթափուէ՛ք, յարգելիներս, եւ զբաղուէ՛ք ձեր աշխատանքով»,- ասել է նա:*

*Փոխարէնը, առիթը բաց չեն թողել ՀՀԿ ու ՀՅԴ ներկայացուցիչները՝ փորձելով ՀՀ վարչապետի յայտարարութիւնները ներկայացնել որպէս մարդկանց արտայայտուելու իրաւունքը սահմանափակելու փորձ: Աւելին՝ նրանք այնքան հեռու են գնացել, որ, օրինակ, ՀՀԿ-ական Արմէն Աշոտեանը Փաշինեանին մեղադրել է արցախատեացութեան մէջ: ՀՅԴ ցուցակը գլխաւորող Արմէն Ռուստամեանն էլ (եւ ոչ միայն նա) կատարուածը որակել են որպէս հայկական երկրորդ հանրապետութեան պաշտօնական ընտրուած իշխանութիւնների՝ հայաստանեան քաղաքական իրավիճակի մասին տեսակէտներ յայտնելն արգելելու փորձ: Կարճ ասած՝ Փաշինեանի դէմ հերթական արշաւն է սկսուել, ինչպէս եւ կարելի էր ակնկալել, պարզունակ մանիպուլիացիաների միջոցով: Ի վերջոյ, միանգամայն ակնյայտ էր, թէ ՀՀ վարչապետն ինչ նկատի ունէր Արցախի իշխանութիւններին ուղղուած իր ուղերձով: Պետական բարձրաստիճան պաշտօնեաների տեսակէտն ընկալւում է որպէս տուեալ երկրի իշխանութեան տեսակէտ: Ըստ այդմ, Փաշինեանի յայտարարութիւնների վերաբերեալ արցախցի տարբեր պաշտօնեաների մեկնաբանութիւնները ընկալւում են ոչ թէ սովորական մարդու անձնական տեսակէտ, այլ հենց ՀՀ իշխանութիւնների դէմ Արցախի իշխանութիւնների խօսք: Իսկ նման իրավիճակներում պաշտօնեաները պարտաւոր են քաղաքական զսպուածութիւն ցուցաբերել՝ զգուշանալով, այսպէս կոչուած, անձնական տեսակէտը յայտնելուց: Իսկ մինչ այդ մէկ փաստ էլ. զուգադիպութի՞ւն է, թէ՞ ոչ. չնայեած Արցախի նախագահը յայտարարեց ՀՀ իշխանութիւնների հետ համակարծիք լինելու մասին, բայց արցախցի պաշտօնեաների մանր սաբոտաժները սկսուեցին Ռոբերտ Քոչարեանին Մարտի 1-ի գործով մեղադրանք առաջադրելուց եւ կալանաւորելուց յետոյ:*

*Վարչապետ Նիկոլ Փաշինեանի դէմ այս օրերին ձեւաւորուած ՀՀԿ-ՀՅԴ տանդեմին դառը հիասթափութիւն էր սպասւում: Մինչ նրանք երկու օր շարունակ փորձում էին ԼՂՀ պաշտօնեաներին Ն. Փաշինեանի՝ իր յայտարարութիւնների վերաբերեալ աւելորդ մեկնաբանութիւններ չանելու մասին յորդորը ներկայացնել որպէս արցախատեացութիւն, հայութեան երկու հատուածների միջեւ սեպ խրելու, մարդկանց արտայայտուելու ազատութիւնը սահմանափակելու փորձ, յայտարարութիւն է տարածել Արցախի նախկին վարչապետ Արայիկ Յարութիւնեանը: Վերջինս, յիշեցնենք, ԼՂՀ-ում իշխող ուժի՝ «Ազատ հայրենիք» կուսակցութեան ղեկավարն է, նաեւ ԼՂՀ նախագահի յատուկ յանձնարարութիւնների գծով ներկայացուցիչը: Ինչպէս արդէն կարող էք կռահել, Արայիկ Յարութիւնեանը յայտարարել է Նիկոլ Փաշինեանի տեսակէտը պաշտպանելու մասին:*

*«Արցախի հարցում որոշ քաղաքական շրջանակների կողմից այս օրերին յաճախակի հնչող մտահոգութիւններին ի պատասխան՝ ասեմ, որ մենք ողջունում ենք պարոն Փաշինեանի ունեցած մօտեցումը, այն է՝ հակամարտութեան լուծման հարցում պէտք է վճռական լինի ժողովրդի դիրքորոշումը: Ըստ այդմ՝ կոչ ենք անում քարոզարշաւի ժամանակ բացառել Արցախի հետ կապուած բոլոր տեսակի շահարկումները: Համոզուած եմ՝ Դեկտեմբերի 10-ին մենք մէկ անգամ եւս ամրագրելու ենք հայկական երկու հանրապետութիւնների առաջնորդների լիովին նոր որակի յարաբերութիւններ, եւ առկայ բոլոր տեսակի հարցերը այդ յարաբերութիւններում յաղթահարելի մանրուքներ են: Այս իմաստով անթոյլատրելի էր մամլոյ պատասխանատուների դրսեւորած անպատասխանատու վարքագիծը, քանի որ վերջիններս հաշուի չեն առել իրենց խօսքի հանդէպ հանրային ընկալումը»,- յայտարարել է Արայիկ Յարութիւնեանը՝ յաւելելով, որ իրենց կուսակցութիւնն անվերապահօրէն աջակցութիւնն է յայտնում Փաշինեանի կողմից «իրականացուող ժողովրդավարական բարեփոխումներին»:*

*Այսպիսով, ԼՂՀ ներկայացուցիչները «փակել են թեման»՝ ընդունելով իրենց պաշտօնեաների սխալն ու այդպէս վերջ դնելով ներքաղաքական դաշտում շահարկումներին:*

*Միաժամանակ, հետաքրքիր էր փաստը, որ երեկ Ստեփանակերտ էին մեկնել ե՛ւ ԱԱԽ քարտուղար Արմէն Գրիգորեանը, ե՛ւ ԱԳ փոխնախարար Շաւարշ Քոչարեանը, որոնք հանդիպել են ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեանին: Այդ հանդիպումների մասին պաշտօնական տեղեկատուութիւնը բաւական աղքատիկ էր. ասուած է, որ նրանք քննարկել են հայկական երկու պետութիւնների փոխգործակցութեանը վերաբերող հարցեր: Բայց ակնյայտ է, որ առնուազն Արմէն Գրիգորեանի հետ հանդիպման ժամանակ անդրադարձ է եղել նաեւ Արցախի պաշտօնեաների պահուածքին: Եւ յետոյ՝ Բակօ Սահակեանը նոր է վերադարձել Մոսկուայից, որտեղ ենթադրւում է՝ անդրադարձ է եղել նաեւ ԼՂ խնդրին:*

*«ԺՈՂՈՎՈՒՐԴ»*

# Ծառուկյանի Անվստահութեան Ներդրումները

ԱՐԱՄ ԱՄԱՌՒՏՆԻ

*Ներդրումները չպէտք է որեւէ կերպ կապ ունենան քուէի հետ՝ քարոզարշաւի ընթացքում յայտարարել էր Նիկոլ Փաշինեանը՝ այդպիսով արձագանքելով «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ներկայացուցիչների նախընտրական ելոյթներին, որոնց առանցքում Գագիկ Ծառուկեանի ներդրումներն են: Աւելին, Ծառուկեանն ինքը նախընտրական հանդիպումների ընթացքում գործնականում չի խօսում այլ բանի մասին, քան ներդրումներն են: Պարզապէս «արաբ շէյխերին» այժմ էլ փաստօրէն միացել են «բրիտանացի լորդերը եւ լորդուհիները»:*

*Իհարկէ, որեւէ մէկը չի կարող որեւէ ուժի արգելել նախընտրական արշաւի ընթացքում խօսել ներդրումների մասին: Աւելին, ներդրումային քաղաքականութիւնը, տնտեսական քաղաքականութիւնը անկասկած պէտք է լինի քաղաքականութեան եւ ընտրական գործընթացի քարոզչութեան առանցքային հարցերից ու թեմաներից մէկը: Սակայն Գագիկ Ծառուկեանն ու ԲՀԿ-ն այդ իմաստով ոչ այնքան քաղաքականութիւնից են խօսում, որքան, այսպէս ասած, հովանաւորութիւնից՝ ներդրումային հեռանկարների հարցը դիտարկելով այդ համատեքստում՝ ձայն տուէք Գագիկ Ծառուկեանին, եւ նա իր անձնական կապերի միջոցով Հայաստան կը բերի շատ ներդրումներ, առատ ներդրումներ: Այսինքն՝ հիմքում ոչ թէ տնտեսական քաղաքականութեան հայեցակարգն է, այլ Գագիկ Ծառուկեանի անձնական կապերը:*

*Այստեղ է, որ քաղաքականութիւնը խոշոր հաշուով նենգափոխւում է, նենգափոխւում է նաեւ ներդրումային խնդիրը՝ գործնականում դէ ֆակտօ առնչութիւն ունենալով նաեւ ընտրակաշառքի հետ, իհարկէ ոչ ուղղակի եւ ոչ «նաղդով»: Որովհետեւ հարց է ծագում, թէ ինչո՞ւ է Գագիկ Ծառուկեանի անձնական կապերի գործօնը աշխատունակ դառնում կամ ներկայացւում միայն ընտրական քուէի հետ կապակցուածութեան դէպքում: Ինչո՞ւ Ծառուկեանն իր ընկերական կապը ներդրումների համար չի օգտագործում՝ անկախ քաղաքականութեան մէջ լինելուց եւ ընտրութեանը մասնակցելուց: Իսկ եթէ օգտագործում է՝ անկախ դրանից, ամբողջ հնարաւոր ծաւալով եւ ոչ թէ նուազագոյն մասով, ապա հարց է ծագում, թէ ինչո՞ւ է այդ հանգամանքը կիրառում քաղաքական ընտրական գործընթացում:*

*Հենց դա է, որ հարցը դէ ֆակտօ նոյնականացնում է ընտրողին ըստ էութեան ներդրումային հեռանկարով կաշառելու իրողութեանը: Իսկ եթէ ԲՀԿ նախագահը ներդրումային իր ամբողջ պոտենցիալը կապում է ընտրական տոկոսների հետ, ապա դա արդէն այլ բան չէ, քան անվստահութիւն թաւշեայ յեղափոխութեանն ու Նիկոլ Փաշինեանին: Որովհետեւ Փաշինեանն էլ թէ՛ ընտրարշաւի ընթացքում, թէ՛ թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ ընդհանրապէս յայտարարում է պարբերաբար, որ Հայաստանի կառավարութիւնը, նոր իշխանութիւնը դուրս է պիգնեսից, չի հետապնդում ոչ մի պիզնես շահ, չի հաւակնում որեւէ բաժնեմասի կամ փայի, միաժամանակ երաշխաւորում է ներդրումներն ու սեփականութիւնը՝ անկախ քաղաքական հայեացքներից, ներկայացնելով ընդամէնը մէկ պայման՝ օրինականութիւն:*

*Եւ եթէ Փաշինեանի այս հաւաստիացումների պայմաններում ԲՀԿ-ն, Գագիկ Ծառուկեանը կամ նրա կուսակիցները յայտարարում են, թէ ինչքան շատ քուէ ստանայ Ծառուկեանը կամ ԲՀԿ-ն, այնքան շատ կը լինեն նրա անձնական կապերով պայմանաւորուած ներդրումները, ուրեմն նրանք չեն հաւատում Փաշինեանի երաշխիքներին եւ ըստ այդմ՝ անվստահութիւն են ցուցաբերում թաւշեայ յեղափոխութեան ու նոր կառավարութեան նկատմամբ: Այդ դէպքում գուցէ պէտք է վարուել ինչպէս Հանրապետակա՞նը՝ այդ ամէնն անել բաց:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massisweekly.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Ոչ Մի Չինովնիկ Իր Կերածը, Գողացածը Չի Մարսելու». Նիկոլ Փաշինեան



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ քարոզարշաւի ընթացքին. կողքին տիկինը՝ Աննա Յակոբեան

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական քարոզարշաւի ընթացքին վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան խօսած է տնտեսութեան զարգացման իրենց ծրագիրներուն մասին: Բացի այդ ծրագիրերէն, խօսած է նաեւ ներքաղաքական հարցերու մասին, անդրադարձած է Հանրապետական պատգամաւոր Արամ Յարութիւնեանը անձեռնմխելիութենէ զրկելու Ազգային ժողովի նիստի տապալման, եւ այն մեկնաբանութիւններուն, թէ Արամ Յարութիւնեանը այս օրերուն կալանաւորելու եւ անձեռնմխելիութենէ զրկելու իշխանութեան քայլը պայմանաւորուած է նախընտրական քարոզարշաւով: Այս մասին, յատկապէս, խօսած էր Դաշնակցական պատգամաւոր, Դաշնակցութեան համամասնական ցուցակը գլխաւորող Արմէն Ռուստամեանը, այն որակելով որպէս նախընտրական քարոզչութեան շրջանակէն ներս բեմականացում:

Նիկոլ Փաշինեանը ըսած է, որ նախաքննութիւնը իր տրամաբանութիւնը ունի ու եթէ ապացոյց կը ձեռք կը բերուի, ապա պէտք է այն բնականոն հունով ընթացք ստանայ:

«Իմ քայլը» դաշինքի առաջնորդը խօսած է նաեւ Հայաստանի մէջ կաշառակերութիւնը արմատախիլ ընելու մասին: Ան ըսած է, որ նոր Հայաստանի մէջ «չինովնիկներ»ը եթէ համարձակին կաշառք վերցնել, ապա անոնք աւելի խիստ պիտի պատժուին քան նախկինները: Յայտարարեց, որ դատական համակարգի մէջ կաշառեալ դատաւորները շատ են եւ անոնք նոյնպէս, մէկ առ մէկ պատասխանատուութեան պիտի ենթարկուին:

«Հայաստանի դատական համակարգում շատ մեծ թիւ են կազմում կոռումպացուած, թալանչի դատաւորները եւ այդ դատաւորներին էլ հատ-հատ բերելու ենք պատասխանատուութեան: Այնքան տարի ապօրինի մարդկանց լցրել են բանտերը, բա «Մարտի 1»-ի գործով Եւրադատարանն արդէն վճիռներ է սկսել կայացնել՝ տասնեակ գործերով, էդ դատաւորներին թւում է, թէ իրենք մարսելու են: Որեւէ մէկը Հայաստանի Հանրապետութիւնում՝ ներկայ կը լինի, նախկին կը լինի, ապագայ կը լինի, ոչ մի չինովնիկ իր կերածը չի մարսելու, իր լափածը, գողացածը չի մարսելու», - ըսած է վարչապետի պաշտօնակատարը:

# Կաշառք Ստանալու Մէջ Մեղադրուող Արամ Յարութիւնեանը Ազատազրկելու Միջնորդութիւն Ներկայացուած է ԱԺ



Ազգային ժողովի պատգամաւոր Արամ Յարութիւնեան

Գլխաւոր դատախազութիւնը կը տեղեկացնէ, որ 2015-ի Սեպտեմբերի 11-ին պաշտօնատար անձի կողմէ առանձնապէս խոշոր չափերով կաշառք ստանալու դէպքի առթիւ Յատուկ քննչական ծառայութիւնը (ՅՔԾ) ձեռք բերուած բաւարար ապացոյցներու համակցութեամբ հիմնաւորած է, որ Ազգային ժողովի պատգամաւոր Արամ Յարութիւնեանը 2008-ին զբաղցնելով բնապահպանութեան նախարարի պաշտօնը, միաժամանակ որպէս «Ընդերքի օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրութեան յատուկ վկայագիրներ» տրամադրող միջգերատեսչական յանձնաժողովի նախագահ, Սիւնիքի, Գեղարքունիքի, Լոռիի, Կոտայքի մարզերու գտնուող մետաղներու 10 հանքերեւակումներու շահագործման յատուկ արտօնագիր տրամադրելու համար, միջնորդաւորուած եղանակով ստացած է 14 միլիոն ԱՄՆ տոլար առանձնապէս խոշոր չափերով կաշառք:

Դատախազութեան հաղորդագրութեան մէջ նշուած է, որ «այնուհետեւ Արամ Յարութիւնեանը, այլ երկրում այլ անձանց անուններով բացուած պանքային հաշիւներով փոխանցումներ ապահովելու եղանակով, նպատակ ունենալով թաքցնել գումարի յանցաւոր ծագումը, օրինականացրել է յանցաւոր ճանապարհով ստացուած առանձնապէս խոշոր չափերով գոյք /փողերի լուացում/, այսինքն՝ առեւտուր կատարել է ծանր յանցագործութիւններ»:

«Միաժամանակ քրէական գործով տուեալներ են ձեռք բերուել այն մասին, որ փաստացի Արամ Յարութիւնեանին են պատկանում Երեւան քաղաքի մի քանի հասցէներում գտնուող առանձնատուն, բնակարաններ, Հանրապետութեան հրապարակի յարակից տարածքում գտնուող 7 հարկանի շէնք, ռեստորանային համալիր, Երեւանի Դ.Անյաղթ 10/1 հասցէում գտնուող աւելի քան 427 միլիոն դրամ արժէքով հասարակական նշանակութեան շինութիւն, Կոտայքի մարզի Գետամէջ համայնքում գտնուող աւելի քան մէկ տասնեակ գիւղատնտեսական նշանակութեան հողամասեր: Նրա կողմից յայտարարագրուել է աւելի քան մէկուկէս միլիոն ԱՄՆ տոլար», -ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Այսպիսով, քրէական գործով ձեռք բերուած ապացոյցներու համակցութիւնը, ըստ դատախազութեան, բաւարար հիմք կու տայ Ազգային ժողովի պատգամաւոր Արամ Յարութիւնեանը սոյն գործով ներգրաւելու որպէս մեղադրեալ:

Գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը միջնորդութիւններ ներկայացուցած է Ազգային ժողովին, ի դէմս Ազգային ժողովի նախագահին՝ տալու համաձայնութիւն Ազգային ժողովի պատգամաւոր Արամ Յարութիւնեանի նկատմամբ քրէական հետապնդում յարուցելուն, ինչպէս նաեւ անոր նկատմամբ կալանաւորումը որպէս խափանման միջոց կիրառելուն:

# «Ռոպերթ Քոչարեանը Պէտք է Մնայ Կալանքի Տակ». ՀՀ Գլխաւոր Դատախազ

Հայաստանի գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը կը գտնէ, որ «Մարտի 1»-ի գործով խումբ մը անձանց հետ սահմանադրական կարգը տապալելու մէջ մեղադրուող Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանը պէտք է մնայ կալանքի տակ:

«Մենք գտնում ենք, որ՝ 'այո': Մեր դիրքորոշումն այն է, որ պէտք է մնայ կալանքի տակ, եւ մենք բերում ենք այն հիմնաւորումները, որոնք վկայում են, որ կայ անհրաժեշտութիւն քննութեան այս փուլում, որպէսզի երկրորդ նախագահը մնայ կալանքի տակ», - «Ազատութեան» հարցին ի պատասխան ըսած է Դաւթեանը:

Նշենք, որ Վերաքննիչ քրէական դատարանը կը քննարկէր Ռոպերթ Քոչարեանի նկատմամբ խափանման միջոց կալանաւորումը անձեռնմխելիութեան հիմքով վերացնելու դէմ բողոքը:

«Ազատութեան» հարցին, թէ կրցա՞ծ են հիմնաւորել Քոչարեանի կալանքի անհրաժեշտութիւնը, Արթուր Դաւթեանը պատասխանած է. - «Մենք այդ փուլին դեռ չենք հասել: Այսօր, կարծում եմ, որ կանցնենք ըստ էութեան քննութեանը եւ այդ ընթացքում կը ներկայացնենք ինչպէս հիմնաւոր կասկածին առնչուող մեր դիրքորոշումը, այնպէս էլ կալանքին առնչուող մեր հիմնաւորումը»:

Աւելի քան 10 օր առաջ Վճռաբեկ դատարանը մասնակի բաւարարած էր Գլխաւոր դատախազութեան բողոքը՝ Քոչարեանի նկատմամբ կալանաւորման վերաբերեալ որոշումը կրկին հասցէագրելով վերաքննիչ ատեանին: Դատախազութիւնը Վճռաբեկ դատարանէն պահանջած էր բեկանել Վերաքննիչի որոշումն ու ուժի մէջ թողել առաջին ատեանի վճիռը, որ նախկին նախագահը կալանաւորելու որոշում ընդունած էր:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՀՀԿ-ական Հրայր Անտոնեանը Ընդունեց Իր Դէմ Եղած Մեղադրանքը

Երեւանի քաղաքապետարանի վարչութեան նախկին պետ, Արաբկիրի նախկին թաղապետ, ՀՀԿ-ական Հրայր Անտոնեանը ընդունած է իրեն առաջադրուած մեղադրանքը: Ան կը մեղադրուի 2017-ի Մայիսի 14-ին Երեւանի աւագանիի հերթական ընտրութիւններու նախընտրական փուլին ընտրողներուն կաշառք տալու մէջ՝ Հայաստանի հանրապետական կուսակցութեան օգտին քուէարկելու համար:

Դատաւոր Տաթեւիկ Գրիգորեանը Անտոնեանէն հետաքրքրուած է՝ արդեօք կամաւոր ներկայացուցած է միջնորդութիւնը, թէ ստիպած են: Հրայր Անտոնեանը պատասխանած է, որ այդ իր կամքն է, եւ որոշումը կայացնելէ առաջ խորհրդակցած է իր պաշտպանին հետ:

Մեղադրող Հայկ Պետրոսեանը ընթերցած է մեղադրական եզրակացութիւնը, ըստ որու՝ 2017 թուականի Մայիսի 14-ին նշանակուած Երեւանի աւագանիի հերթական ընտրութիւններուն ՀՀԿ-էն առաջադրուած է Հրայր Անտոնեանը, որ միաժամանակ հանդիսացած է Երեւան քաղաքի Կոմիտասի պողոտայ 56 հասցէի վրայ տեղակայուած՝ ՀՀԿ-ի նախընտրական շտապի ղեկավարը: Նախընտրական շտապի աշխատանքներուն իրեն աջակցելու նպատակով ան դիմած է «ՍԱՍ Կրուփ» ՍՊ ընկերութեան պատկանող հանրախանութներու ցանցի տնօրէն Ստեփան Սահակեանին:

Արաբկիր վարչական շրջանի ընտրողներէն ՀՀԿ-ի օգտին առաւելագոյն քուէներ ապահովելու նպատակով, ընտրողներուն մէկ քուէի համար որպէս կաշառք տուած է 10.000 ՀՀ դրամ: Ընտրողներուն նիւթապէս շահագրգռելու, ինչպէս նաեւ նախընտրական շտապի կողմէ ստեղծուած ենթաշտապերու ծախսերը հոգալու նպատակով Հրայր Անտոնեանը ներդրած է 48 միլիոն 417 հազար ՀՀ դրամին համարժէք 100.000 ԱՄՆ տոլար գումար, ինչպէս նաեւ նոյն նպատակներով օգտագործելու համար Ստեփան Սահակեանի կողմէ տրամադրուած 15 միլիոն ՀՀ դրամ գումարը:

Ստեփան Սահակեանը եւս ընդունած է առաջադրուած մեղադրանքը եւ միջնորդած է արագացուած դատաքննութիւն իրականացնել: Այս գործով բացի Հրայր Անտոնեանէն եւ Ստեփան Սահակեանէն կան նաեւ 9 անձ:

# ԼՈՒՐԵՐ

## Նախագահ Արմէն Սարգսեան Հանդիպած է Վարչապետ Անկելա Մերքէլի Հետ



Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի եւ վարչապետ Անկելա Մերքելի հանդիպումը

*Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան վարչապետի նստավայրին մէջ Նոյեմբեր 28-ին կայացած է Հայաստանի Նախագահ Արմէն Սարգսեանի եւ վարչապետ Անկելա Մերքէլի հանդիպումը:*

*Ինչպէս կը տեղեկացնէ ՀՀ նախագահի մամլոյ վարչութիւնը, ողջունելով Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնական այցը Գերմանիոյ Դաշնային Հանրապետութիւն՝ վարչապետ Անկելա Մերքէլ ըսած է, որ շատ լաւ յիշողութիւններ ունի Հայաստան կատարած իր վերջին այցէն:*

*Ան նշած է, որ յատկապէս տպաւորուած է «Թումօ» ստեղծարար արհեստագիտութիւններու կեդրոնով, եւ այժմ գերմանական կողմը կը քննարկէ համագործակցութեան հնարաւորութիւնները:*

*«Հայաստանը Գերմանիան կը դիտարկէ որպէս քաղաքական եւ տնտեսական կարեւոր գործընկեր ու բարեկամ երկիր»,- ըսած է նախագահ Սարգսեան եւ նշած, որ ուրախ է կրկին հանդիպելու եւ շարունակելու հայ-գերմանական յարաբերութիւններու ընդլայնման վերաբերեալ քննարկումները: Անոր խօսքով՝ երկու երկիրները կրնան յաջողութեամբ համագործակցիլ բարձր եւ տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտներուն մէջ, ուր Հայաստանը ունի մեծ ներուժ: «Մեր երկիրը կրնայ հարթակ ըլլալ տարբեր նախաձեռնութիւններու (startup) համար»,- ընդգծած է Արմէն Սարգսեան:*

*Հայաստանի նախագահն ու Գերմանիոյ վարչապետը երկու բարեկամ ժողովուրդներու միջեւ կապերու ամրապնդման տեսանկիւնէ կարեւոր համարած են նաեւ մշակութային ու գիտակրթական ոլորտներու մէջ ձեւաւորուած բաւական արդիւնաւէտ համագործակցութեան ընդլայնումը: Անոնք խօսած են նաեւ զբօսաշրջութեան ոլորտի մէջ գործակցութեան վերաբերեալ, ինչպէս նաեւ մտքեր փոխանակած են վիզաներու ազատականացման հարցի շուրջ:*

## Հայկական Ռազմական Օդանաւ Մը Կործանած Է. Երկու Օդաչուները Զոհուած



Հայկական ռազմական օդանաւի կործանման վայրը

*Մարալիկի տարածաշրջանին մէջ՝ Մարալիկէն դէպի Բարձրաշէն լեռնային հատուածին մէջ, Հայաստանի Զինուած ուժերու ՄՈւ-25 մարտական օդանաւ կործանուած է, երկու օդաչուները՝ փոխգնդապետ Արմէն Բաբայեանը եւ գնդապետ Մովսէս Մանուկեանը զոհուած են:*

*Ամենօրեայ մարտական պատրաստութեան ծրագրով ուսումնամարզական թռիչք իրականացնող օդանաւը, պաշտպանութեան նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, թռիչքային երթուղի դուրս եկած էր ժամը 10:06-ին՝ Գիւմրիի օդակայանէն, ժամը 10:20-ի սահմաններուն կապը օդանաւի հետ կորսուած էր:*

*Քանի մը ժամ շարունակուած որոնողա-փրկարարական աշխատանքներէն ետք պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը Ֆէյսպուքի իր էջին գրած է, որ վթարի վայրը յայտնաբերուած է՝ այն Մարալիկի տարածաշրջանի լեռներուն մէջ է:*

*Աւելի ուշ պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդագրութիւն տարածած է, ուր ըսուած է՝ - «Աւիապատահարի հետեւանքով զոհուել են առաջին կարգի օդաչու, փոխգնդապետ Արմէն Սլավիկի Բաբայեանը եւ երրորդ կարգի օդաչու, գնդապետ Մովսէս Գէորգի Մանուկեանը»: Նախարարութիւնը խորապէս ցաւակցած է զոհուած փորձառու օդաչուներու ընտանիքներու անդամներուն, հարազատներուն ու ծառայակիցներուն:*

*Գլխաւոր դատախազութեան լրատուական ծառայութենէն «Ազատութեան» փոխանցած են, որ մարտական օդանաւի կործանման փաստի առթիւ յարուցուած է քրէական գործ՝ թռիչքներու կամ անոնց նախապատրաստման կամ շահագործման այլ կանոնները խախտելու յատկանիշներով, որ անզգուշութեամբ յանգեցուցած է երկու կամ աւելի մարդու մահուան:*

## Հայաստանը Աշխարհի 10-ը Ամենառազմականացուած Երկիրներէն է

*Հայաստանը 2017 թուականին ընդգրկուած է աշխարհի 10-ը ամենառազմականացուած երկիրներու ցանկին մէջ, միաժամանակ, Եւրոպայի ամենառազմականացուած երկիրը ճանչցուած է: Այս մասին կը վկայեն Պոննի Քոնվերսիայի միջազգային կեդրոնի կողմէ հրապարակուող Ռազմականացման միջազգային զեկոյց 2018-ի տուեալները:*

*Տասնեակին մէջ ներառուած են Իսրայէլը, Սինկափուրը, Հայաստանը, Կիպրոսը, Հարաւային Քորէան, Ռուսաստանը, Յորդանանը, Պրունէյը եւ Պելառուսը: Զեկոյցին մէջ կը նշուի, որ այս երկիրները մեծ դրամագլուխներ կը յատկացնեն ռազմական կարիքներուն՝ միւս ոլորտներուն համեմատ:*

*«Հակառակ 2016 թուականին ապրիլեան յարումէն ետք հրադադարի շուրջ բանակցութիւններուն, վերջին երկու տարիներուն Լեռնային Ղարաբաղի շրջանին գրանցուած են հրաձգութիւններ եւ ատրպէյճանական անօդաչու սարքի մէկ յարձակում: Ասոր հետեւանքով կը շարունակուի լարուածութիւնը շրջանին մէջ, Հայաստանը (3) եւ Ատրպէյճանը (12) կը շարունակեն չափազանց շատ մեծ ներուժ ներդնել զինուած ուժերու մէջ»,ըսուած է զեկոյցին մէջ:*

*Նշենք, որ Վրաստանը 52-րդ տեղը կը գրաւէ, Թուրքիան՝ 20-րդ եւ Իրանը՝ 22-րդ:*

*Զեկոյցը հիմնուած է 2017 թուականի տուեալներու վրայ եւ կը պարունակէ 155 երկրներու մասին տեղեկութիւն:*

## Փայլան. Մամուլի Ազատութեան Հարցով Թուրքիան Մութ Ժամանակներ Կ'ապրի

*Ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան Թուրքիոյ խորհրդարանի ամպիոնէն բարձրաձայնած է երկրի մէջ մամուլի ազատութեան վիճակի մասին:*

*Ելոյթին մէջ Փայլան նշած է, որ մամուլի ազատութեան հարցի վերաբերեալ Թուրքիան մութ ժամանակներ կ'ապրի:*

*Թուարկելով թրքական «Սապահ», «Սթար», «Եէնի Շաֆաք», «Աքշամ», «Միլլիյէթ», «Հիւրրիյէթ» «Թիւրքիյէ» «Աքիթ» պարբերականները՝ Փայլանը զանոնք իշխանութեան խօսափողեր անուանած է:*

*«Մամուլի համար երկու ճանապարհ կայ՝ կա՛մ պէտք է փառաբանէ սուլթանը, կա՛մ ըլլայ ազատ: Սակայն ազատութիւնը իր գինն ունի՝ ձերբակալութիւններ, ճնշում, սահմանափակումներ», - ընդգծած է թրքական խորհրդարանի հայազգի պատգամաւորը:*



Թուրքիոյ խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան

*Ան մեղադրած է իշխանութիւնները մամուլի ազատութիւնը սահմանափակելու համար՝ պնդելով, թէ այդպիսով անոնք կ'ուզեն, որ մարդիկ չկարդան, չքննադատեն, հարցեր չբարձրացնեն:*

*Փայլան համոզմունք յայտնած է, որ իշխանութիւններու նման գործելակերպը առաջին հերթին իրենց կը վնասէ: «Ցանկացած ուժ, որ չի քննադատուիր, սխալներ կը գործէ: Թողէք ազատ մամուլը ձեզ քննադատէ, մենք ալ, դուք ալ աւելի քիչ սխալներ ընենք», - յայտարարած է հայազգի պատգամաւորը:*

www.massispost.com

## Եւրոպացի Դիտորդները Դրական

Շարունակուած էջ 1-էն

*կազմակերպութեան մէջ: Այսինքն՝ այդ կազմակերպութիւնը ունի կարողութիւն, փորձառութիւն, այնտեղ կ'աշխատին փորձառու մարդիկ, բայց նախկին խնդիրները առաջացած են քաղաքական ազդեցութիւններու պատճառով: Հիմա կը տեսնենք այլ քաղաքական կամք, որ կ'աջակցի արդար ընտրութիւններուն: Բայց սա շատ լաւ բան չէ, որովհետեւ ընտրութիւններ կազմակերպող կազմակերպութիւններ ը պէտք չէ կախուած ըլլան այս կամ այլ քաղաքական կամքէ, որովհետեւ քաղաքական կամքը կրնայ լաւ ըլլալ, ընտրութիւնները լաւ անցնին, ըլլայ վատ՝ ընտրութիւնները վատ անցնին: Մեր դիրքորոշումը հետեւեալն է, որ ինչպէս Հայաստանի մէջ, այնպէս ալ այլ երկիրներու մէջ ընտրութիւններով զբաղուող կամզկերպութիւնները պէտք է ըլլան ազատ, անկախ, պէտք չէ կախուած ըլլան քաղաքական կամքէ», - ընդգծած է Զլաթքօ Վուլովիչը:*

# Հայաստանէն Թալանուած Վերադարձուելիք Գումարը Կրնայ Հաւասարիլ Պետական Պիւտճէին

*Պետութեանը գոյքի նուիրատուութիւն կատարելու մասին գրաւոր առաջարկով դիմած են միայն Զօրավար Մանուէլ Գրիգորեանը եւ Մաքսային ծառայութեան նախկին պետ Արմէն Աւետիսեանը:*

*Այս մասին «Ազատութեան» տեղեկացուցած է պետական գոյքի կառավարման կոմիտէի նախագահ Նարեկ Բաբայեանը՝ աւելցնելով, որ նուիրատուութիւնները դեռ չեն ընդունուած եւ նման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է կառավարութեան որոշումը:*

*«Իրենք նամակ են գրել, բայց կառավարութիւնը պէտք է դիրքորոշում յայտնի, այդ թւում նաեւ դատախազութիւնը իր կարծիքը պէտք է յայտնի: Օրինակ, Մանուէլ Գրիգորեանի դէպքում գոյքեր կան, որ, ասում են, համայնքից անօրինաբար են իրեն անցել: Հիմա կարող է դատարանում որոշուել, որ դա պէտք է, ենթադրենք, բռնագանձուի: Այս իմաստով պէտք է թէ՛ դատախազութեան կարծիքը լինի, թէ՛ քաղաքական որոշում պէտք է լինի: Եթէ դա լինի, արդէն նուէր ընդունելու գործընթացը մենք կ'իրականացնենք», - նշած է Նարեկ Բաբայեանը:*

*Արմէն Աւետիսեանի նկատմամբ փողերու լուացման քրէական գործ կայ եւ ան առաջարկած է պետութեան նուիրել Ծաղկաձորի «Կոլտըն Փալաս» հիւրանոցը, որ նախնական գնահատմամբ կրնայ արժել մինչեւ 20 միլիոն տոլար:*

*Մանուէլ Գրիգորեանը, որ իւրացման եղանակով խոշոր չափի գոյքի յափշտակութեան մէջ կը մեղադրուի, պատրաստակամ է պետութեան նուիրել 5 միլիառ դրամի գոյք: Սերժ Սարգսեանի եղբայր Ալեքսանտր Սարգսեանը յայտարարած է իր հաշիւներէն մէկուն վրայ առկայ 30 միլիոն տոլարը նուիրատուութեամբ փոխանցելու մասին:*

*Այս օրինակները Տաւուշի մարզի մէջ հանրահաւաքի ժամանակ հնչեցուցած է վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը՝ նշելով, որ պետութենէն թալանուած միջոցները կարճ ժամանակի մէջ վերադարձնելու տարբերակներէն մէկն ալ սա է, որ պէտք է իրականացուի անցումային արդարադատութեան գործիքակազմով՝ խորհրդարանական ընտրութիւններէն ետք:*



*Վարչապետի յանձնարարականով կառավարութեան մէջ ձեւաւորուած է աշխատանքային խումբ, որ կը զբաղուի անցումային արդարադատութեան հարցերով:*

*Վարչապետի խորհրդական, անցումային արդարադատութեան փորձագէտ Նիկոլայ Պաղտասարեանը այդ աշխատանքային խումբի անդամ է: Ան նշած է, որ առաջնայինը օրէնսդրական կարգաւորման խնդիրն է: Փորձագէտի համոզմամբ՝ պէտք է օրէնսդրական հիմք ստեղծել գործողութիւններու համար, ինչը կրնայ ընել միայն նոր ձեւաւորուող Ազգային ժողովը:*

*Վարչապետի խորհրդականը յստակեցուցած է՝ անցումային արդարադատութիւնը չենթադրեր քրէական պատասխանատուութենէն ազատում: Անոր պարզաբանմամբ, կան 4 տեսակի յանցագործութիւններ՝ թեթեւ, միջին, ծանր եւ առանձնապէս ծանր: Վերջին երկուքի պարագային մարդիկ, ըստ Պաղտասարեանի, պէտք է ենթարկուին քրէական պատասխանատուութեան:*

*«Աւելի շատ գոյքի մասին ա խօսքը, քան դուք լրատուամիջոցներով պատկերացնում էք, որովհետեւ խօսքը վերաբերում ա նաեւ էն գոյքին, որը գտնուում է արտասահմանում, ոչ թէ Հայաստանում: Մեխանիզմներ կան, երբ որ այլ պետութիւններում թողնում ես դու այդ գոյքի 20 տոկոսը, 80 տոկոսը վերադարձնուում ա: Ֆիլիփինները վերադարձրել են իրանց պիւտճէից աւելի մեծ գումար: Ես եւս ակնկալում եմ, որ մենք կ'ունենանք վերադարձ մեծ գումարների, որը կը հաւասարուի մեր պետական պիւտճէին: Հաստատ պարտքը կը փակենք մեր», - «Ազատութեան» հետ զրոյցը եզրափակած է Նիկոլայ Պաղտասարեանը:*

# Զանգուածային Ցոյցեր Ֆրանսայի Մէջ Գլխաւոր Պատճառ Տուրքերու Յաւելում եւ Վառելանիւթի Գիներու Բարձրացում



*Անցնող շաբաթավերջին եւ յաջորդող օրերուն Ֆրանսան եւ մասնաւորաբար մայրաքաղաք Փարիզն ապրեցան խռովայոյզ օրեր: Տեղի ունեցած զանգուածային ցոյցերն սկսան նշանաւոր Շան Զէ Լիզէ պողոտայով, ուր 5,000 ցուցարարներ փակեցին պողոտան: Կանգնեցուեցան արգելիչ պատնէշներ, հրկիզուեցան ինքնաշարժեր, ստեղծելով սարսափի մթնոլորտ: Ձերբակալուած են աւելի քան 300 ցուցարարներ եւ կան շուրջ 200 վիրաւորներ:*

*Ցուցարարները կը բողոքէին տուրքերու յաւելումին եւ վառելանիւթի գիներու նոր սակերու բարձրացումին ու կեանքի սղութեան դէմ: Անոնք անծանօթ զինուորի յուշարձանի մօտ կազմեցուած պատնէշները խորտակեցին եւ ազգային քայլ երգն երգեցին: Հինգ հազար ապահովութեան յաւելեալ ուժեր շարժման անցնելով անդորրութիւն ապահովելու ճիգեր բանեցուցին: Ֆրանսայի վարչապետ Էտուարտ Ֆիլիփի համաձայն ցուցարարները յարձակած են ոստիկանութեան վրայ: Ցուցարարները կրած էին պահաջատիրական պաստաներ: Անոնցմէ մէկուն վրայ գրուած էր «Մագրոն, ժողովուրդը ապուշ մի յորջորջէր»:*

*Ցոյցերը նախ սկսած էին վարորդներու նախաձեռնութեամբ, պահանջելով վառելանիւթի վրայ դրուած յաւելեալ հարկի ջնջումը: Բայց այնուհետեւ վերածուեցաւ երկրէն ներս տիրող ապրուստի սղութեան դէմ ներկայացուած պահանջներու:*

*Նշենք նաեւ որ անցեալ Նոյեմբերի 17ին սկսած բողոքի շարժումին հետեւանքով 2 հոգի մահացաւ, հարիւրաւորներ վիրաւորնեցան եւ երկրի զանազան ճանապարհներու վրայ անցարգելներ զետեղուեցան:*

# Փութին-Թրամփ Անպաշտօն Հանդիպումը

*Անցեալ շաբաթավերջին Արժանթինի մէջ կաայացած քսաններու խմբակի վեհաժողովին (G-20), ԱՄՆ-ի նախագահ Թրամփ նախապայմաններ դրած էր Ռուսիոյ նախագահ Փութինի հետ հանդիպելու համար: Ուաշինկթընի նախապայմանները (Ուքրանիոյ հետ ծովային միջադէպի քննարկումը) մերժուած էր Ռուսաստանի կողմէ: Ուստի պաշտօնական երկկողմանի հանդիպումը տեղի չունեցաւ:*

*Այս առնչութեամբ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին յայտնեց թէ Արժանթինի մջ Քսաններու վեհաժողովի ծիրին մէջ ոտքի վրայ խօսած է Տանըլտ Թրամփի հետ եւ հակիրճ կերպով բացատրած Սեւ Ծովու մէջ ուքրանական նաւերու բռնագրաւման մասին: Փութին այս առթիւ նշեց նաեւ որ ուքրանական նաւերու բռնագրաւման հարցին շուրջ մենք մեր դիրքորոշումն ունինք եւ ԱՄՆ ալ իր պատկերացումն ունի: Ապա նշեց. «Կը կարծեմ որ Թրամփ որեւէ բանէ չի վախնար: Ան հասուն տարիքի եւ մեծ փորձառութեան տէր անձ մըն է»:*

*Կ'իմանանք թէ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին կը ծրագրէ մօտ ապագային այցելել Սէուտական Արաբիա: Միւս կողմէ Արժանթինի մէջ կայացած Քսաններո վեհաժողովի ընթացքքին ըստ օտար լրագրողներու, ջերմօրէն իրար ողջունած են Փութինն ու Սէուտական Արաբիոյ գզահաժառաանգ իշխան Մուհամմատ Պին Սալմանը:*

# Արժանթինի Մէջ Էրտողան Կրկին Հերքած է

Շարունակուած էջ 1-էն

*դէմ: Անոնք հաւաքուած էին Պուենոս Այրեսի մէջ Թուրքիոյ դեսպանատան մօտ:*

*«Էրտողանի ներկայութեան հնարաւորութիւնը, անոր այցը շատ ծանր կ'ընդունինք ես եւ իմ ընտանիքը, ես այստեղ եմ յանուն իմ մեծ պապերու յիշատակին, յանուն մեր ամբողջ համայնքի մեծ պապերուն յիշատակին», - ըսած է Արժանթինի հայ համայնքի ներկայացուցիչ Ակուսթին Անարեանը:*

*Հաւաքի ընթացքին ցուցարարները խօսած են ոչ միայն Օսմանեան Թուրքիոյ մէջ հայերու ցեղասպանութեան, այլեւ արդի Թուրքիոյ մէջ ազգային փոքրամասնութիւններու, այդ շարքին՝ քիւրտերու հալածանքներու մասին:*

*Ցուցարարները նշած են, որ Էրտողանի ռեժիմը հետեւողականօրէն կը հետապնդէ ժողովրդահանրապետական կուսակցութեան պատգամաւորները, իսկ այդ կուսակցի ղեկավար Սելահատտին Տէմիրթաշը 2016 թուականէն բանտն է: Էրտողանի վարչակարգը կը հալածէ հանրային աքթիւիսթները եւ իրաւապաշտպանները:*

*«Reuters» լրատուական գործակալութիւնը նշած է, որ Արժանթինի հայերը շատ աշխոյժ են հայ-թրքական յարաբերութիւններու հարցի վերաբերեալ եւ ամէն տարի Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած միջոցառումներ կը կազմակերպեն:*

*Արժանթինը ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը:*

# Հայաստանեան Կեղծ Բժշկական Վկայականներու Հարց Իսրայէլի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

*ներու հետ միասին ներկայացուցած ենք առողջապահութեան նախարարութիւն», եւ «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ պատմած է փաստաբան Հատաս Պրաւէն: եւ «Եթէ ստուգումներու ու հետաքննութեան հետեւանքով պարզուի, որ այդ ուսանողներուն մէկ մասը իրօք կեղծ վկայականներ ձեռք բերած է, ապա այս դէպքերը շատ վատ պիտի անդրադառնան այն բարեխիղճ ուսանողներուն վրայ, որոնք իրօք սորված ու ստացած են լիարժէք կրթութիւն Հայաստանի մէջ»:*

*Փաստաբանը նաեւ կարծիք յայտնած է, որ երբ տարիներ առաջ Իսրայէլի առողջապահութեան նախարարութիւնը նման կասկածներ ունէր, ապա Հայաստանի բուհերուն հետ պէտք է կապ հաստատէր ու խնդիրները քննարկէր, այլ ոչ թէ մէկ բողոքի հիման վրայ տարիներ ետք մարդոց ձերբակալէին ու հետաքննութիւն սկսէին:*

*Երեւանի պետական բժշկական համալսարանի մամուլի պատասխանատու Շուշան Դանիէլեանն ալ «Ազատութեան» տրամադրած գրաւոր պատասխանին մէջ յայտարարած է, որ տարածուած տեղեկութիւնները ոչ մէկ աղերս ունին Երեւանի պետական բժշկական համալսարանի հետ:*

## Մտահոգիչ են Ատրպէյճանի Կողմէ ԵՈՒՆԷՍՔՕ-ի Հարթակի Քաղաքականացման Ընդհանուր Հակումները. ԱԳՆ




*Մտահոգիչ են Ատրպէյճանի կողմէ ԵՈՒՆԷՍՔՕ-ի հարթակի քաղաքականացման ընդհանուր միտումները, որոնք արդէն տեղ կը գտնեն ԵՈՒՆԷՍՔՕ-ի աշխատանքային մեթոտներու մէջ: Այս մասին նշած է Արտաքին գործոց նախարարութեան մամլոյ ծառայութիւնը՝ անդրադառնալով «կալա»ի դիտարկման, որ օրերս Մավրիքիոսի մէջ ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պահպանման հարցերով միջկառավարական կոմիտէի 13-րդ նստաշրջանին ընդունուած է ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկին մէջ գրանցելու նպատակով Ատրպէյճանի կողմէ ներկայացուած «Yalli (Kochari, Tenzere) traditional dances of Nakhichevan» յայտը:*

*ԱԳՆ-էն յայտնած են հետեւեալը. «Ըստ Մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան մասին համաձայնագրի այս կամ այն երկրի կողմից ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկում որեւէ տարրի վերաբերեալ յայտի գրանցումը չի ենթադրում տարրի հանդէպ սեփականութեան իրաւունք:*

*Ցանկում տարրը գրանցելիս, ճանաչուում են տուեալ երկրում (կամ բազմազգ յայտերի դէպքում՝ տուեալ երկրներում) տուեալ տարրի մշակութային դրսեւորումները եւ դրանց առանձնայատկութիւնները:*

*Ըստ ատրպէյճանական յայտի՝ կայ «Եալլի» տեսակի շուրջ 60 պարատեսակ, որոնք կիրառուել են Նախիջեւանում, եւ դրանց շարքում է նաեւ քոչարին:*

*Այս հարցում առաւել մտահոգիչ են Ատրպէյճանի կողմից ԵՈՒՆԷՍՔՕ-ի հարթակի քաղաքականացման ընդհանուր հակումները, որոնք արդէն տեղ են գտնում ԵՈՒՆԷՍՔՕ-ի աշխատանքային մեթոտների մէջ: ԵՈՒՆԷՍՔՕ-ն, որը ստեղծուել է նպաստելու խաղաղութեանը եւ ժողովուրդների անվտանգութեանը՝ մշակոյթի միջոցով պետութիւնների միջեւ համագործակցութեան խթանմամբ, այսօր նմանօրինակ քաղաքականացման արդիւնքում վերածուում է խնդիրների խորացման հարթակի, եւ սա պէտք է մտահոգիչ լինի կառոյցի բոլոր անդամների եւ ԵՈՒՆԷՍՔՕ Գլխաւոր տնօրէնի համար:*

*Հայաստանը բազմիցս է այս իրողութիւնը, ինչպէս նաեւ Ատրպէյճանի կողմից որդեգրուած անառողջ մօտեցումները ներկայացրել ԵՈՒՆԷՍՔՕ-ի միջոցառումների ժամանակ, ներառեալ Ձեր նշած նիստին»:*

## ԱԱԾ-ն Պատկերացում Ունի, Թէ Ովքեր են Աղմկայարոյց Գաղտնալսման Պատուիրատուները



*Ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ), ծառայութեան պետ Արթուր Վանեցեանի խօսքով, արդէն պատկերացում ունի, թէ ովքեր պատուիրած են ու իրականացուցած են Ազգային անվտանգութեան ծառայութեան եւ Յատուկ քննչական ծառայութեան (ՅՔԾ) պետերու հեռախօսազրոյցի գաղտնալսումը, բայց մեղադրանք առաջադրելու համար փաստական հիմքեր չունին:*

*Վանեցեանը աւելցուցած է, որ տարբեր դիրք զբաղցնող անձերէ այդ թեմայի մասին տեղեկատուութիւն կը ստանան, որ, սակայն, չի փաստագրուիր.- «Տեղեկատուութիւնը ստացուում է, բայց, ցաւօք սրտի, չի լինում փաստաթղթաւորել այդ տեղեկատուութիւնը, փաստագրել, այսինքն՝ ունենալ յստակ տուեալներ, որոնք կարող ես տրամադրել քննչական մարմնին, որովհետեւ մարդիկ, ովքեր արել են այդ գործը, շատ լաւ են պատրաստուած եղել, եւ հետքեր չեն թողել, որով կարող ենք մեղադրանքներ ներկայացնել մարդկանց»:*

*Հարցին, թէ արդեօք հնարաւոր է գտնել ու պատժել այդ մարդոց, Վանեցեանը արձագանգած է. - «Ժամանակը ցոյց կը տայ: Այս պահին չգիտեմ կը կարողանա՞նք փաստագրել եւ պատասխանատուութեան ենթարկել այդ անձանց»:*

*Աղմկայարոյց ձայնագրութիւնը հրապարակուած էր 11 Սեպտեմբերին, սակայն, Վանեցեանի խօսքով, այն համացանցի մէջ տեղադրուած էր դեռ 6 Սեպտեմբերին Սպանիայէն:*

*ԱԱԾ տնօրէնը նաեւ աւելցուցած է, որ իրականացնողները շատ զգոյշ գործած են, իրաւապահները չեն կարենար գտնել սկզբնաղբիւրն ու քանդել կծիկը. - «Սեպտեմբերի 6-ից տեղադրուել , եւ տարբեր միջոցներով այլ երկրներից, գաղտնագրման տարբեր ծրագրեր օգտագործելով, այդ ձայնագրութիւնը տարածուել է, ինչը պատճառ է, որ չենք կարողանում գտնել սկզբնաղբիւրը»:*

## Վրաստանը, Մոլտովան, Ատրպէյճանը, Հայաստանը եւ Ուքրանիան Չեն Կրնար Զարգանալ ՌԴ-ի Պատճառով. Մերքել

*Գերմանիան «չի կրնար աչքերը փակել» այն հանգամանքի վրայ, որ Ռուսաստանի հարեւանութեամբ գտնուող երկիրները չեն կրնար այնպէս զարգանալ, ինչպէս կը ցանկային: Այս մասին յայտարարած է Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքելը Պերլինի մէջ տեղի ունեցած գերմանա-ուքրանիական տնտեսական համաժողովի ժամանակ, այս մասին կը փոխանցէ NOI.md-ը:*

*Մերքել ըսած է, թէ այնպիսի երկիրներ, ինչպիսին են Վրաստանը, Մոլտովան, Ատրպէյճանը, Հայաստանը եւ Ուքրանիան, չեն կրնար զարգանալ Հարաւային Օսիայի, Մերձտնեսթրի, Լեռնային Ղարաբաղի եւ Ուքրանիայի արեւելեան մասին մէջ սառեցուած հակամարտութիւններու պատճառով:*

*«Գերմանիոյ մէջ մենք չենք կրնար ասոր վրայ աչք փակել»,- ըսած է Անկելա Մերքելը:*




NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

LIFE INSURANCE | INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE | LONG TERM CARE | MEDICARE | DENTAL & VISION | DISABILITY



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

(818) 500 9585
(818) 269 0909

# Դէպի Արտահերթ Ընտրութիւններ

ՃՐՏԳ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

*Ընդհանրապէս խաղաղ մթնոլորտի մէջ կը շարունակուի 9 Դեկտեմբեր 2018թ-ի Հայաստանի մէջ կայանալիք արտահերթ ընտրութիւններու նախընտրական քարոզարշաւը. երկրին համար նորութիւն մըն է այդ առիթը, որը թաւշեայ յեղափոխութեան արդիւնքն է, թէեւ "Յեղափոխութեան" գոյն տալը (թաւշեայ թէ այլ), նախընտրելի չէ որովհետեւ գունաւոր փոփոխութիւնները վերջապէս կրնան սեւ ըլլալ եւ երկիրը քայքայել, ինչպէս եղաւ Ուքրանիոյ եւ Վրաստանի պարագաները: Ընտրութիէններուն մասնակցող կուսակցութիւններու թիւը մեծ է եւ բոլոր թեկնածուներն ալ իրենց լաւագոյն աշխատանքը կը տանին, որպեսզի խորհրդարանի մէջ տեղ ապահովեն: Տեսնենք թէ ի՞նչ են կանխատեսութիւնները:*

*ընտրութիւններուն պիտի մասնակցին քաղաքական տարբեր ուժեր որոնք են «Իմ քայլը» դաշինքը, որը «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Առաքելութիւն» կուսակցութիւններերու դաշինքն է, «Մենք» դաշինքը, որուն մաս կը կազմեն «Ազատ դեմոկրատներ» եւ «Հանրապետութիւն» կուսակցութիւնները. Հայաստանի Հանրապետական եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնները, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, «Լուսաւոր Հայաստան», «Քրիստոնեայ-ժողովրդական վերածնունդ», «Սասնայ ծռեր», «Օրինաց երկիր», սոցիալ-դեմոկրատական «Քաղաքացիի որոշում», եւ «Ազգային առաջընթաց» կուսակցութիւնները:*

*Վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան, նմանապէս անոր գործակից ընկերները , վստահաբար բացառիկ յաջողութիւններ պիտի արձանագրեն, մեծ յաղթանակ մը: Ժողովուրդի մեծամասնութիւնը անոնց կ՝աջակցի. անոնցմէն քանիներ նախկին կարգերու ժամանակ սեւ օրեր ապրած են եւ սակաւապետներու դառն ու դաժան ճնշումներուն ընդդիմացած ու բանտերը ճաշակած են:*

*Նախկին Հանրապետական կարգերը (ՀՀԿ) մեղադրուած են երկրին հարստութիւնը կողոպտելու, քաղաքացիական իրաւունքները խախտելու, կառավարական, դատական թէ քաղաքացիական ծառայութիւնները խուճապի մատնելու, ինչպէս նաեւ փտածութեան, կաշառակերութեան, գործազրկութեան, արտագաղթի եւ այլ յանցանքներով. այս բոլորով հանդերձ, անոնք ալ իրենց համակիրները ունին, թէեւ քիչ  սակայն անոնք իրենց փոխադարձ շահերը ունին եւ շատ հաւանաբար ՀՀԿ ալ իրեն բաժինը պիտի ունենայ յառաջիկայ խորհրդարանին մէջ: «Բարգաւաճ Հայաստան»ը իր մեծ գործատէր ղեկավարով իր բաժինը պիտի ունենայ եւ միւս կուսակցութիւններն ալ անպայման իրենց օգտին որոշ չափով քուէարկողներ պիտի ունենան: Պատգամաւոր կը դառնան այն ուժերը, որոնք յաղթահարած են նուազագոյն ձայներու շեմը: Կուսակցութիւններու համար 5 տոկոսն է, իսկ դաշինքները պէտք է հաւաքեն ամենաքիչը 7 տոկոս:*

*Միջազգային հանրապետական հաստատութիւնը (The International Republican Institute- IRI) որը ԱՄՆ-ի կառավարութեան կողմէն դրամական օգնութիւն կը ստանայ եւ ոչ շահաբեր հաստատութիւն մըն է, ու լաւ յարաբերութիւններ ունի ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցութեան հետ, 23 Նոյեմբերի 2018-ին Հայաստանի մասին ուսումնասիրութիւն մը հրապարակած է. այդ ուսումնասիրութիւնը Հայաստանի բնակիչներու հասարակական նոր կարծիքի մասին է. ան տեղի ունեցած է (9 - 29) Հոկտեմբեր 2018ին, Հայաստանի բոլոր մարզերուն մէջ. այդ հետազօտութեան համաձայն, յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն Նիկոլ Փաշինեանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը պիտի ըստանա ձայներու 67 տոկոսը, Էտմոն Մարուքեանի «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնը 10 տոկոսը իսկ Գագիկ Ծառուկեանի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան 9 տոկոսը. հիմնուելով (IRI) ի սոյն հետազօտութեան վրա այս երեք կուսակցությունները միակն են, որոնք յաջորդ խորհրդարանի մէջ պիտի ներկայացուին: Միւս կուսակցութիւնները շատ ետին պիտի մնան. «Սասնայ ծռեր» 3 տոկոս «ՀՀԿ» 2տոկոս, «ՀՅԴ» 2 տոկոս եւայլն:*

*Կը թուի թէ հետազօտութեան տուեալները գոնէ ՀՀԿի պարագային շատ տրամաբանական չէն. Ըստ ուրիշ վերլուծումներու «Իմ քայլը» դաշինքը 70 տոկոսով, ՀՀԿ-էն (20-25) տոկոսով (?? ՄԱՍԻՍ), «Բարգաւաճ Հայաստան»ը եւ միւս կուսակցութիւնները (5-10) տոկոսով յաջողութիւն պիտի ունենան:*

*Որքանո՞վ կարելի է վստահիլ (IRI) ի եւ իր նման հետազօտութիւններուն. Ի՞նչ է անոնց թաքուն նպատակները. ի՞նչ կ՝որոնէ Ամերիկան Հայաստանի մէջ. միթէ՞ Ռուսաստանին համար աւելի կարեւոր չէ Հայաստանի յաջորդ խորհրդարանի արդիւնքները. Ամերիկայի եւ շատ մը ուրիշ երկիրներու մէջ այսպիսի հետազօտութիւններու տուեալները ընդհանրապէս համապատասխան կ՝ըլլան կամ փոքր այլ տարբերութեամբ վերջնական արդիւնքներէն: Արդեօք այս մէկը ի՞նչպէս պիտի իրականցուի Հայաստանի պարագային:*

*Ի հարկէ (IRI) ի այս հետազօտութիւնները անարժէք չէն, անոնք շատ մը ուրիշ կարեւոր տուեալներ ունին. ըստ անոնց, մասնակցողներու 41 տոկոսը շատ դրական կը կարծեն Հայաստանի կառավարութեան վերջին փոփոխութիւնները, եւ ուրիշ 41 տոկոս մըն ալ դրական կը կարծէ, իսկ 10 տոկոսը բացասական, ուրիշ 3 տոկոս մըն ալ խիստ բացասական, եւ մնացած 5 տոկոսը պատասխան չունի: Իսկ կառավարութեան ամենամեծ յաջողութիւնը փտութեան եւ կաշառակերութեան նուազումը կը կարծուի, եւ ամենափոքր յաջողութիւնը աշխատատեղերու ստեղծումը: Ներկայ կառավարութեան աշխատակազմի նշանակուիլը անյարմար եւ ամենամեծ ձախողութիւնը նկատուած է. յառաջիկայ վեց ամիսներու ընթացքին Փաշինեանէն ակնկալուած երեք կարեւոր ձեռքբերումներն են գործազուրկներուն աշխատանք ապահովել, տնտեսական եւ ընկերային հարցերը լուծել եւ կենսաթոշակները բարձրացնել: Ժողովուրդի 72տոկոսը կը խորհի*

Շար.ը էջ 15

# Սրտի Խօսք Հայրենաբնակ Մեր Ժողովուրդին

ՅԱԿՈԲ ՏԷՐԵԱՆ

*Սիրելի հայրենակիցներ,*

*Գիտենք որ շատ երկար սպասեցիք (մօտ 25 տարի) կարենալ ազատուելու անօրէն իշխանաւորներու անօրէն կառավարումէն:*

*Ընդվզեցաք, ըմբոստացաք ու դուրս ելաք բողոքելու անօրէն բռնատիրութեան դէմ: Բայց ափսոս որ Մարտի Մէկով եւ 10 երիտասարդներու արեան յեղումով ճնշեցին ձեր վրան ու լռեցուցին:*

*Անոր յաջորդող ըմբոստութեան շարժումները դարձեալ խեղդուեցան ճնշումներու տակ:*

*Եւ դուք ընդվզելով մէկտեղ ենթարկուեցաք այդ ճնշումներուն:*

*Բոլոր անոնք որոնք համոզուած եղան որ այլեւս որեւէ յաջողութեան յոյս չմնաց իրենց համար երկրէն ներս, գաղթեցին օտար երկիրներ իրենց փախտը որոնելու՝ դատարկելով հայրենիքը:*

*Սպիտակի աւերիչ երկրաշարժէն ի վեր, տակաւին անտուն ու անտէր ընտանիքներ, խարխլած տուներու ու տնակներու մէջ կը քաշքշեն իրենց թշուառական կեանքը, մինչ անօրէն իշխանաւորները բարձր մակնիշներով ինքնաշարժերու շարասիւներով եւ իւրաքանչիւրը տասնեակ թիկնապահներու պաշտպանութեամբ ման կու գան երկրին մէջ, առանց դոյզն անգամ ակնարկ մը նետելու այդ խեղճ ու թշուառ ընտանիքներու վրայ:*

*Իսկ ընդհանրապէս աղքատ դասակարգի մարդիկ մնացին աղքատ, քանի որ պէտք էր մնային աղքատ, որպէսզի կարելի ըլլար 5-10 հազար դրամով գնել իրենց քուէները:*

*Այո, գնեցին ձեր քուէները եւ այդ քուէներով պահեցին իշխանութիւնը իրենց ձեռքին մէջ երկար ատեն: Իսկ դուք անտեսուած վիճակով մնացիք, ականատես ըլլալով բոլոր այդ անիրաւութիւններուն որոնք կատարուեցան երկրէն ներս:*

*Դուք տեսաք թէ ինչպէս շինուեցան ապօրէն շէնքեր, հոն ուր պէտք չէր շինուէին:*

*Դուք տեսաք շինութիւնը Հիւսիսային պողոտային որուն սալայատակը հինգ տարին չբոլորած փշրուելով քար ու քանդ եղաւ:*

*Դուք տեսաք թէ ինչպէս սկսաւ շինութիւնը Հիւսիս-Հարաւ ճանապարհին, որուն համար յատկացուած ամբողջական գումարը թէեւ սպառեցաւ... սակայն ճամբու երկայնքին միայն 10 տոկոսը շինուեցաւ... այն ալ ամենահարթ եւ ուղիղ վայրին վրայ:*

*Դուք տեսաք թէ ինչպէս գեներալ մը գինուորներունհամար հայթայթուած պահածոյ միսերով կը կերակրէր իր արջերն ու կենդանիները:*

*Դուք տեսաք թէ ինչպէս նախկին վարչապետ մը, յատուկ խողովակներով կը գողնար ջուրը, ոռոգելու՝ իր այգիներն ու պարտէզները:*

*Եւ տակաւին «զորն ասեմ եւ զորն խոստովանիմ»:*

*Կարելի չէ թուել բոլոր զեղծարարութիւնները, գողութիւնները, կաշառեկութիւնները, չարաշահումները եւ այլն:*

*Եւ դուք մասնաւորաբար տեսաք ամենաթողութեան եւ անպատժելիութեան մենաշնորհները բոլոր անոնց, որոնք ունէին անարգելու ու անպատիժ կարենալ աշխատելու իրաւունքը իրենց ձեռքին ունենալով ամենազօր ՀՀԿի անդամաքարտը, եւ այդ անդամաքարտին զօրութեամբ մարդիկ ազատ համարձակ եւ անպատիժ գործեցին ամէն տեսակի ապօրէն գործեր:*

*Տ. Տ. Բաբգէն Ա. Կիւլէսէրեան Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոսի գլուխ գործոցն է «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» մեծադիր հատորը, 1446 երկսիւն էջերով, որ կը բովանդակէ Կիլիկիոյ 39 Կաթողիկոսներու լրիւ շարքը եւ յարակից պատմութիւնը 1441-1936 հինգ դարերու ընթացքին: Գաւազանագիրքը կը սկսի Գրիգոր Մուսաբէկեան Կաթողիկոսէն (1439-1451) ու կը հասնի մինչեւ Սահակ Բ. Խապայեան (1902-1939) եւ Բաբգէն Ա. Աթոռակից Կիւլէսէրեան (1931-1936) հեղինակ Կաթողիկոսը: Հատորը յետ մահու հրատարակութիւն մըն է, լոյս տեսած 1939-ին Անթիլիասի մէջ: Բաբգէն Կաթողիկոս վախճանած էր 1936 թուին: Հեղինակը հետեւած է իր բազմարդիւն ուսուցչին եւ Արմաշի Դպրեվանքի վերատեսուչ Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի «Ազգապատում»ի երեք հատորներուն, որոնց կրտսեր եղբայրը կարելի է համարել զայն՝ որպէս իսկական լրացուցիչը Օրմանեանի գործին: Սակայն չմոռնանք, ինչպէս մոռցած է Կիւլէսէրեան Կաթողիկոս, որ Օրմանեանի գործը զոր քննադատած է Կիլիկեան Կաթողի- կոսներու վերաբերեալ «Ազգապատում»ի յօդուածներուն առիթով, որ Օրմանեանի գործը ընդհանուր Հայ Եկեղեցւոյ վերաբերեալ ըլլալով, Կիլիկիոյ Կաթողիկոսներուն վերապահուած բաժինը բնականօրէն պիտի մնար հարեւանցի: Մինչդեռ Կիւլէսէրեան միայն Կիլիկիոյ Կաթողիկոսներուն վրայ կեդրոնացած ըլլալով շատ աւելին գրած է անոնց մասին, վկայակոչելով ձեռագրաց յիշատակարաններ Դարանաղեցիէն սկսեալ մինչեւ Ալիշան եւ Չամչեան:*

### Երեք Բաժիններ

*Ներկայ հատորը երեք բաժիններ ունի, որոնցմէ առաջինը կ'ընթանայ կաթողիկոսներու շարքով, երկրորդը իր երեք գիրքերով՝ պատմագիտական լուրջ ուսումնասիրութիւններով՝ «Էջմիածին եւ Սիս», «Սիս եւ Երուսաղէմ», «Աղ եւ Աղթամար» խորագիրներով, ինչպէս նաեւ յաւելուած մը՝ «Մանր ուսումնասիրութիւններ» եւ «Բնագիրներ»: Ներածական բաժնին մէջ «Ընդհանուր Ակնարկ»ով մը քննուած են Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աթոռանիստ հանգրուանները ու անոնց տեղափոխութեանց պատճառները մանրամասնօրէն, հիմնուած սկզբնաղբիւր- ներու տուեալներու վրայ: Հեղինակը քննած է Թովմա Մեծոփեցի պատմիչի տեղեկութիւնները թէ ինչպէս «Կաթողիկոսութիւնը Կիլիկիոյ մէջ իբրեւ հետեւանք լատին շփումին, իր հմայքը կորսնցուցած էր յաչս Արեւելեան (Հայաստանի) Վարդա- պետներուն»:*

### Մայր Աթոռին Վերջնական Փոխադրութիւնը Արեւելեան Վարդապետները

*Բաբգէն Կաթողիկոս վերլուծած է Հայրապետական Աթոռին Կիլիկիայէն Էջմիածին վերադարձի ներքին եւ արտաքին պատճառները, հարց տալով թէ ինչո՛ւ համար Գրիգոր Մուսաբէկեան Կաթողիկոս մերժեց Էջմիածին փոխադրուելու պատուաբեր հրաւէրը՝ ըսելով, «հաւանաբար ծեր էր եւ չուզեց շարժիլ իր տեղէն, մանաւանդ երբ տեսաւ որ, ըստ Մեծոփեցի պատմիչին, Կիլիկիոյ ի ներքին կողմանց եպիսկոպոսներէն չորսը, չուզեցին զինքն, եւ նամակներ գրեցին Արեւելեան Վարդապետներուն եւ նոյն ինքն Մեծոփեցիին, եւ Մուսաբէկեան Սիս մնաց ընկճելու համար իր հակառակորդները»:*

*Պարտք կը զգամ աւելցնել որ հատորին Բ եւ Գ մասերը պատմագիտական արժէք կը ներկայացնեն, ինչպէս «Էջմիածին եւ Սիս» յաւելուածը, 1441 թուին Կիլիկիոյ եւ Էջմիածնի կաթողիկոսներու ներհակ շարժումը կանխող դէպքերու քննութեամբ յագեցած:*

*Աթոռին Էջմիածին վերադարձը, ինչպէս կը բացատրէ Բաբգէն Կաթողիկոս, Երեւանի պարսիկ Աղուպ Պէյին արտօնութեամբ կարելի եղած էր, «որովհետեւ նիւթական մեծ շահ մը կ'ապահովէր այդ կերպով իր գանձին համար», առանց սակայն երաշխաւորելու Հայաստանի բնիկ եւ վերականգնեալ Աթոռին վարկն ու ապահովութիւնը:*

*Աթոռին վերջնական փոխադրութեան ետին կար միշտ Հայաստանի Արեւել- եան Վարդապետներու նեցուկը, Հաղբատէն, Սանահինէն, Տաթեւէն եւ Գլաձորէն, որոնք այլեւս Կիլիկիան չէին ընդուներ որպէս կեդրոն Հայոց Հայրապետութեան: Թող որ Երեւանի քաղաքական կացութիւնն ալ անկէ աւելի յուսալի չէր 1441 թուին: Բաբգէն Կաթողիկոս կը յիշեցնէ թէ «Քրիստոնեաներն էին որ պիտի վճարէին ծանր տուրքերն ու հարկերը» պահել կարենալու համար կաթողիկոսարանն ու Երեւանի եկեղեցիները, որուն համար հեղինակը ժամանակակից յիշատակարանէ մը դիպուկ խօսք մը կը մէջբերէ, թէ «Հայք կամաւոր հալածանքի կը դիմէին Աթոռը Սիսէն Էջմիածին փոխադրելով»:*

### Կասկածելի Յարաբերութիւն Հռոմի հետ

*Կիլիկիոյ Ազարիա Կաթողիկոսի մասին կարեւոր բաժին մը վերապահած է Բաբգէն Կաթողկոս իր ծաւալուն հատորին մէջ, ուր յայտնի եղած է նաեւ Ազարիա Կաթողիկոսի Հռոմի հետ մշակած կասկածելի յարաբերութիւնը, որ ըստ Օրմանեան Պատրիարքի ան ենթակայ մնացած է Հռոմի, եւ ըստ Բաբգէն Կաթողիկոսի՝ պաշտպան Հայ Եկեղեցւոյ: Հռոմի հետ Ազարիայի յարաբերութիւնը կը հանդիպէր Գրիգոր 13-րդ Պապի գահակալութեան որ կը ձեռնարկէր արեւելքի եկեղեցիները Հռոմի միացնելու ծրագրին, երբ նաեւ Գրիգորեան Նոր Տոմարի դրութիւնը կը հաստատէր: Ազարիա «որպէս ուղղափառ եւ հաւատարիմ վարդապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ», ըստ Բաբգէնի, պաշտպան կանգնած է իր եկեղեցիին, սակայն հակասութեան մէջ կ'իյնայ երբ կը մէջբերէ Ազարիայի գրած «վաւերական» կոչուած նամակը նոյն Գրիգոր Պապին ուղղուած, ուր Ազարիա «հնազանդութիւն կը յայտնէ Հռոմի եկեղեցիին եւ անոր առաքելական օրհնութիւնն ու հաստատութիւնը կը խնդրէ Կիլիկիոյ Աթոռին վրայ»: Կեղծուած «Դաշանց Թուղթ»ին ակնարկելով, «զայն մենք ալ կ'ընդունինք եւ կը փոչմանինք անցեալին վրայ եւ կ'ուրախանանք ապագային համար», ըսած է Ազարիա:*

*«Դաշանց Թուղթ» կոչուածը յերիւրուած էր Կիլիկեան Թագաւորութեան շրջանին որուն համաձայն իբր թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հռոմի Սեղբեստրոս Պապին մօտ գացած է եւ իր «հնազանդութիւնը» յայտնած չորրորդ դարու սկիզբը: Ուրեմն 800 տարիներ ետք շինծու եւ անարժէք այդ թուղթը Հայ Եկե- ղեցւոյ հպատակութեան նշան կը ցուցուէր, որուն կ'ակնարկէր Ազարիա Կաթողիկոս:*

*Ի պաշտպանութիւն Ազարիայի, Բաբգէն Կաթողիկոս կ'այպանէ Մաղաքիա Օրմանեանի գրածները իր մասին «իբրեւ կաթոլիկացած մէկը», հիմ ունենալով որ Օրմանեան իր «Ազգապատում»-ը գրած ատեն չէր տեսած Դարանաղեցիի «Ժամանակագրութիւնը» որ կը ժխտէ Ազարիայի ամէն հակում դէպի Հռոմ, եւ «նենգով դարբնուած կեղծագրութիւն մըն է պարզապէս» կ'ըսէ Բաբգէն Կիւլէ- սէրեան Կաթողիկոս: Այսուհանդերձ, վերոյիշեալ Ազարիայի նամակը Բաբգէն «վաւերական» կ'որակէ, որ լի է Հռոմի հանդէպ ցոյց տրուած ենթակայութեան եւ հնազանդութեան լիաբերան օրհնութիւններով: Ազարիայի այդ նամակը երբեք չարդարացնէր Ազարիայի «ուղղափառութիւնը» որուն համար Բաբգէն տկար եւ անցողակի պատճառաբանութիւն մը տուած է միայն, թէ «Ազարիա հնարաւոր զիջումներ ըրած էր Վատիկանին՝ անկից քաղաքականապէս օգտուելու յոյսով», որոնք բոլորովին անպտուղ մնացին, ինչպէս Բաբգէն Կաթողիկոս ինք կը հաստատէ:*


## ԾԱԽՈՒ Է

Ծախու է Լիբանանահայ մտաւորական «Նայիրի» ամսագրի ականաւոր խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» ամսաթերթերու 1958-1975 տարիներու լաթակազմ հաւա-քածոները:
Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել՝
Վահէ Աջապահեանին՝ (626) 354-5924:

# Անգլիա Տարպի Քաղաքային Խորհուրդը Միաձայն Ընդունում է Հայոց Ցեղասպանութիւնը Պաշտոնապես Ճանաչելու Բանաձեւ

ՌԱՍԸԼ ՊՈԼԱՐԴ
(Russell Pollard)

2009 թ. Սեպտեմբերին ես վայրէջք կատարեցի Երեւան որպես զբօսաշրջիկ, առաջին, եւ ես մտածեցի 'վերջին անգամ:

Հայաստանի մասին իմ գիտելիքները սահմանափակուած էին Lonely Planet Guide-ի բացատրութեան մի քանի էջերից: Երբեք չէի ակնկալել, որ սա 9-ամեայ ճանապարհորդութեան սկիզբն էր, որի հետեւանքով 2018 թ. Նոյեմբերի 21-ին Անգլիայում, Անգլիայի Տարպի քաղաքը նշանակալից որոշում կայացրել:

Այդ այցի ընթացքում կարեւոր էին մի քանի բաներ:

Ես ուզում էի այցելել Ծիծեռնակաբերդ (Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր/Թանգարան) - Ինձ հետաքրքրում էր պատմութեան մի մասը, որը մեր դպրոցներում չի ուսուցուել: Ես շատ քիչ բան գիտէի Թուրքիայում մոռացուած վայրագութիւնների մասին, 94 տարի առաջ: Ցեղասպանութեան Թանգարանում պատկերները վշտացնող էին, պատմութիւնները յուզիչ, նիւթը թաքնուած:

Ցեղասպանութեան յուշահամալիրում մի շարք ցուցատախտակներ կան այդ մարդկանց եւ երկիրների որոնք կը յիշեն ու կը նշեն Հայոց ցեղասպանուԹԻՒՆը

Ես քայլեցի, համբերատար եւ բարեխղճօրէն, վերեւ եւ ներքեւ, յարգալից ցուցատախտակների կողքով, փնտրում էի Մեծ Բրիտանիայի ցը, սակայն չկար: Ցետագայում հասկացայ, որ Մեծ Բրիտանիան չի ճանաչում Հայոց ցեղասպանութիւնը ... իմ որոնումը ապարդիւն էր:

Ես Արարատը փնտռեցի հեռաւորութեան վրայ ... բայց չկար

Հայաստանի Անկախութեան օրը ես քայլեցի զինուորների եւ վետերանների հետ: Ես չգիտէի, թէ ուր ենք գնում, բայց մենք շարունակեցինք քայլել մղոններով: Ի վերջոյ, հասանք Եռաբլուր գերեզմանատուն:

Ժամանակն էր յիշել ընկածներին: Ես անհեթեթ կը յիշեմ 1990-ականների սկզբին Արցախում տեղի ունեցած պատերազմի մասին: Մեծ Բրիտանիայում Բոսնիայում տեղի ունեցած պատերազմի ժամանակ Արցախը երկրորդական տեղ զբաղեցրեց: Ծաղիկներով ծածկուած մի գերեզման կար, տապանաքարին վրայ, ուշադիր եւ ճշգրիտ փորագրուած դիմանկարով: Ես յիշեցի նրա դէմքը, բայց չգիտէի ինչու - դա Արցախեան պատերազմի հերոս Մոնթէ Մելքոնեանն էր:

Մարդիկ լաց էին լինում:

Ես փնտռում էի Արարատը, բայց դեռ այնտեղ չէր:

Իմ այցը մօտենում էր վերջին: Ես տեսնում էի Արարատը ամէն խանութում, գրքերում, բաժակներում, ամէնուր-բայց ոչ իրականում: Ես քայլում էի, ապա, յիշում եմ երբ առաջին անգամ յայտնուեց, ես արտասուեցի: Այն վեհօրէն արեւմուտքից բարձրացաւ՝ հայ ժողովրդի, պատմութեան եւ ազգի խորհրդանիշը: Անհասանելի էր: Ես հիացած էի:

Ինչու չի կարելի Արարատին հասնել.... Թուրքիայում է - ինչու՞: Հայոց ցեղասպանութեան պատճառով ... դա «պարզ» է: Ամենօրեայ յիշեցում Հայերի հանդէպ կատարուած դաժանութեան:

Վերադարձայ Անգլիա, եւ ես զգացի, որ Հայաստանը, ինձ համար, «անաւարտ գործ» էր, ես ուզում էի այցելել Արցախ, եւ այդպէս վերադարձայ յաջորդ Մայիսին:

Այդ պահից եւ յետագայ 15 այցելութիւնների ժամանակ ես հանդիպեցի շատերին Հայաստանում, Արցախում եւ Մեծն Բրիտանիայում ապրող Հայերին: Ոմանք, որոնք ընդմիշտ բարեկամ պիտի լինեն, թոյլ տուեցին ինձ իսկապէս հասկանալ կեանքը Հայաստանում եւ Արցախում: Բայց ոչ թէ որպէս զբօսաշրջիկ, այլ մարդասիրական եւ աւելի նպատակաուղղուած բան:

Ես ոգեշնչուեցի Հելեն Քելլեր-ի կողմից մէջբերուած միտքից, որը ազատեց ինձ այն տեսակէտից, որ մինչեւ հիմնական փոփոխութիւն չկատարենք ապա ինչու անհանգստացնենք մենք մեզի ...

«Ես չեմ կարող անել ամէն ինչ, բայց ես կարող եմ անել մի բան, եւ քանի որ ես չեմ կարող անել ամէն ինչ, ես չպիտի հրաժարուիմ անելէ այն որ կարող եմ անել»:

Եվ այդպէս, ես ըրի ...

Ես սկսեցի գրել, ստեղծեցի այս կայքը, դասախօսութիւններ կազմակերպեցի: Արցախի վարչապետից ես պարգեւատրուել եմ մետալով, իսկ Ատրպէյճանի կողմից կոչուած «մերժուած անձ»: Ես փնտռում էի յարմար առիթը ճիշտ հնարաւորութիւնով: Ես ուզում էի ասել ոչ հայերին- ուզում էի տարածել թէ ինչպէս Արցախի բնակիչները շարունակաբար սպառնալիքի տակ էին եւ են, եւ թէ դա 1915 Թուականի Հայոց ցեղասպանութեան հետեւանքն է ... եւ իրողութիւնը, որ այն չէ ճանաչուած, կը պահպանէ այս ցեղասպանական հնարաւորութիւնը Ատրպէյճանի համար- Թուրքիայի դաշնակիցը:

Ես ապրում եմ Տարպիում, Մեծ Բրիտանիայի կեդրոնում, 250,000 մարդու մի փոքր քաղաք: Այն ունի բազմազան ազգերի բնակչութիւն, որտեղ խօսւում է գրեթէ 200 լեզուներ, ունի մեծ պատմութիւն եւ վաստակաւոր մարդիկ: Հայ համայնք չկայ:

2015 Թուականին ես միացայ մի փոքրիկ կամաւորների յանձնաժողովի, որը՝ հարգում է Հոլոքոստի Ցիշատակի օրը (ՀՀՕ) (Holocaust Memorial Day (HMD)), Դա, պետականօրէն, աւանդաբար կեդրոնանում է ցեղասպանութիւների վրա, Երկրորդ համաշխարհային պատերազմի Հոլոքոստի ժամանակ եւ յետոյ: Ես հարցրեցի, թէ կարող եմ խոսել Հայոց ցեղասպանութեան մասին: Զիս ջերմօրեն ընդունեցին, եւ ինձ հնարաւորութիւն տրուեց ելոյթ ունենալ աւելի քան 200 Դարբի քաղաքացիների առաջ՝ որպես հիմնական ծրագրի մի մաս: Թուրքական կառավարութիւնը մեր մտադրութիւնները իմացաւ եւ մէկ օր առաջ Տարպի քաղաքապետին գրեց, «խրախուսելով» մեզհեռացնել Ցեղասպանութեան վերաբերեալ հղումից: Մենք ազնիւօրէն տեղեկացրինք նրանց, որ մենք ոչինչ չենք փոխի:

Այդ ժամանակից ի վեր ամէն տարի ես դասախոսեցի՝ շեշտելով շատերին Հայոց ցեղասպանութիւնը եւ դրա հետեւանքները Արցախում ժամանակակից հայերի համար:

Տարպի Քաղաքային Խորհուրդը Տարպիի տեղական կառավարութիւնն է: Այն տեղակայուած է Մեծ Բրիտանիայի կառավարութեան անմիջական ներքեւում՝ ներկայացնում է ժողովուրդը ընտրված 51 խորհրդարանականների միջոցով: Նրանք իրաւունք ունեն պաշտոնական բանաձեւեր ներկայացնել քաղաքի ժողովրդի անունից:




Այս տարվա սկզբին ՀՀՕ-ի յանձնաժողովը քննարկումներ սկսեց Խորհրդի հետ աջակցելու ցեղասպանութեան ճանաչման մասին: Սկզբում ընկաւ խուլ ականջների: Երբեմն այս հարցերը կապուած են յարմար ժամանակի հետ, ուստի մենք սպասում էինք: Մի քանի ամիս առաջ պատահեց յարմար առիթը, եւ ես պատրաստեցի առաջարկութիւնը. հաստատուեց որ այն կը քննարկուի:

2018 թ. Նոյեմբերի 21-ին Ամբողջական խորհուրդը համաձայնեց ընդունել այս առաջարկութիւնը, դրանով Տարպին եղաւ Անգլիայի առաջին քաղաքը պաշտոնապէս ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը:

Տարպի քաղաքի համար հպարտ օր էր, դա այդ դիրքը խիզախօրէն արեց, պարզ մարդասիրական հիմքերու վրայ:

Ցուսով եմ, որ ապագայում հայկական աշխարհը կը ճանաչի թէ Տարպին արեց առաքինի գործ: Մի քաղաք, որ ովկիանոսների վրայից ձեռք երկարեց Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում ապրող մարդկանց ... ասելու համար, «մենք լսում ենք ձեր ցաւը, մենք տեսնում ենք, զգում ենք ... եւ մենք ձեզ հետ ենք, կանգնած ձեր կողքին, եւ ձեզ հետ»:

Մենք արեցինք «ինչ-որ մի բան»...

թարգ:
Բժ. Արա Նահապետեան

## Դէպի Արտահերթ Ընտրութիւններ

Շարունակուած էջ 7-էն

թէ Հայաստանը իր ուղիղ ճամբուն վրայ է իսկ 1 տոկոսը ոչ եւ մնացած 17 տոկոսը կարծիք չունի: Տնտեսական իրավիճակը մասին միայն 8 տոկոսը կը կարծեն թէ շատ բարելաւուած է, 32 տոկոսը որոշ չափով բարելաւուած, 45 տոկոսը կը կարծէ նոյնն է, 11տոկոսը աւելի վատ, 2 տոկոսը շատ վատ մնացածը 2 տոկոսը չի գիտեր: Շատ կարեւոր կէտ մըն ալ ան է որ ժողովուրդին 61տոկոսը որոշած է երբեք չքուէարկել ՀՀԿ-ին: Հայաստանի բարենպաստ քաղաքագէտներու եւ յայտնի անձնաւորութիւններու (26) հոգինոց ցանկը գլխաւորած են Փաշինեանը եւ Արմէն Սարգիսեանը (համապատասխանաբար 82 եւ 81 տոկոսներով). Ծառուկեանը միայն 51 տոկոսով գնահատուած է, իսկ ցանկին պոչը բռնած են Տէր Պետրոսեան, Քոչարեան, Սերժ Սարգիսեան, Շարմազանով եւ Արմէն Աշոտեան համապատասխանաբար 18, 13, 12, 10, եւ 8 տոկոսներով: Արդարեւ ուսումնասիրութիւնը շատ երկար է եւ մէկ յօդուածով կարելի չէ ամէն ինչ ընդգրկել:

Վերջապէս, մենք յուսով ենք որ քարոզարշաւը եւ ընտրութիւնները պիտի կայանան հանդարտ, խաղաղ եւ հայուն վայելուչ մթնոլորտի մէջ. Նաեւ յուսով ենք որ արդարութիւնը վերջապէս պիտի տիրէ մեր երկրի մէջ եւ բոլորս միասին պիտի կերտենք մեր փայլուն ապագան: Ցաղթանակին հասնիլը շատ դժուար է ու կարեւոր, սակայն յաղթանակը պահելը ալ աւելի բարդ ու հիմնական: Ներկայ առիթը պէտք չէ՛ կորսնցնել, թէրեւս անիկա վերջինը ըլլայ:

## Սրտի Խօսք Հայրենաբնակ Մեր Ժողովուրդին

Շարունակուած էջ 7-էն

Սիրելի հայրենակիցներ,

Դեկտեմբեր 9ին տեղի ունենալիք նոր խորհրդարանական ընտրութիւններուն ընդառաջ, յուսով ենք ձեր ձեռք բերելիք լիակատար յաջողութեան:

Վստահ ենք պիտի քուէարկէք այնպէս որ վերջ տուած ըլլաք «Հայաստանի Հարստահարիչներու կուսակցութեան»:

Իսկ եթէ տակաւին պիտի գտնուին միամիտներ, որոնք դեռ յոյս կը կապեն Հ.Հ.Կ.ին այդպիսիներուն կ'ուզենք յիշեցնել որ մարդ արարածը միայն մէկ անգամ կ'իյնայ փոսի մէջ: Որով զգուշանալ պէտք է, որպէսզի կրկին անգամ չիյնան նոյն փոսին մէջ որմէ դուրս կարենալ ելլելը շատ երկար եւ շատ սուղ նստաւ բոլորին վրայ:

## «Սփիւռքահայ Կեանքեր՝ Ինչպէս Որ Տեսայ» Գիրքին Շնորհահանդէսը՝ Նիկոսիա,Կիպրոս



Կազմակերպութեամբը Կիպրոսի հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի՝տեղի ունեցաւ դոկտ.Հրայր Ճէպէճեանի «Սփիւռքահայ կեանքեր՝ ինչպէս որ տեսայ» գիրքին շնորհահանդէսը՝ուրբաթ նոյեմբեր 30, 2018ին՝ Իւթիւճեան սրահին մէջ՝Նիկոսիա: Ձեռնարկը կը հովանաւորէր Կիպրոսի հայոց Թեմի Կաթողիկոսական փոխանորդ՝Գեր.Տ.Խորէն Արք. Տողրամաճեան՝եւ կը նախագահէր պրն.Վարդգէս Մահտեսեանը՝Կիպրահայ Պետական ներկայացուցիչը:

Սրբազան Հայրը բացումը կատարեց եւ նաեւ հանդիսավարեց երեկոն: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ ապա հակիրճ կերպով ներկայացուց օրուան գիրքի հեղինակը: Իր խօսքին մէջ Սրբազանը ըսաւ թէ «բոլոր յօդուածները Հրայրի աչքով,սրտով եւ հոգիի պրիսմակէն դիտուած գրութիւններ են: Այնպէս ինչպէս գիրքին անունը շատերս ալ զինք կը ճանչնանք մեր սեպհական ապրումներով եւ համոզումներով: Իր յօդուածները լոյս տեսած են սփիւռքի զանազան թերթերուն մէջ»: Ապա անդրադառնալով գիրքի բովանդակութեան եւ խմբագրութեան՝Սրբազանը յիշեց նաեւ խմբագիր դոկտ. Արտան որ նեցուկ կանգնած էր ոչ միայն հրատարակչական-խմբագրական աշխատանքին այլեւ ներշնչման եւ գիրքի հրատարակութեան յաջողութեանը համար: Սրբազանը նաեւ յիշեց որ հեղինակին գիրքը կը յիշեցնէ հայ գրականութեանը ծառայող այլ վիթխարի անուններու,որոնք «հայու բեկորներ»ու մասին գրած են: Եւ եզրաբակելով Սրբազանը հաստատեց ընդունուած այն ճշմարտութիւնը թէ «խօսքը կը թռչի եւ գիրը կը մնայ»: Ան յիշեց նաեւ թէ Հրայր Ճէպէճեան ամէն մակարդակներու վրայ հանդիպելով աշխարհական թէ եկեղեցական անձնաւորութիւններու իր գրութիւնները կը շօշափեն բոլոր բազկերակները եւ մարդկային դասակարգի բոլոր բնագաւառները:

Գիրքը ներկայացուց պրն.Շահան Գանտահարեանը՝Պէյրութի Ազդակ օրաթերթի գլխաւոր տնօրէն եւ խմբագիր՝որ յատկապէս հրաւիրուած էր Կիպրոս այս ելոյթին համար:

Պրն. Գանտահարեան մատնանշեց թէ Հրայր Ճէպէճեանի այս երկրորդ հատորի խորագիրը ինքնին ամբողջական բանաձեւումն է բովանդակութեան առանցքներուն: «Սփիւռքահայ կեանքեր ինչպէս որ տեսայ. Այո բոլոր պատումները կը վերաբերին Սփիւռքին, սփիւռքահայ կեանքերուն. Անոնք կեանքեր են՝ ապրուած ու ապրող կեանքեր, որոնք կը բնութագրեն պատմութեան ճկատագրորոշ իրադարձութիւններու ձգած ազդեցութիւնը տարբեր սերունդներու, ինչպէս մարդկային այնպէս նաեւ ազգային կերտուածքներուն վրայ: Տագնապներ, ձգտումներ, հայկականութիւնը պահելու ապրումներ, ճիգեր, մտահգութիւններ անձկութիւններ եւ մանաւանդ յոյսեր: Անոնք բոլորն ալ ներկայացուած են ոչ միայն իբրեւ պատումներ կամ պատմուածքներ այլ այս անգամ խորագրին երկրորդ մասը նկատի ունենալով ՝ ինչպէս, որ Հրայր Ճէպէճեան ընկալած է զանոնք»:Եւ ակնարկելով Հայաստանի եւ հայրենիքի գործընթացքին վրայով՝ ըսաւ նաեւ պրն.Գանտահարեան: «Հրայր Ճէպէճեանի ներկայացուցած հայկական ընդլայնուած աշխարհագրութեան մէջ տարածուած հայու կերպարները Հայաստանը մեզի համար տուն է յայտարարելով կ'ընդգծեն անկախ պետականութեան գոյութեան սփիւռքահայու վրայ ունեցած ազդեցութիւնը եւ նորովի ըմբռնումը՝ ազգային, հայրենական եւ քաղաքացիական պատկանելիութեան»:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ մանկավարժ,տնօրէն եւ ներկայիս Կիպրոսի Նարեկ վարժարանի հոգաբարձութեան ատենապետ եւ նաեւ գեղանկարիչ՝ պրն.Վարդան Թաշճեանը՝եւ որուն գեղանկարչական գործերէն մէկն է գիրքին կողքի նկարը:Ան ըսաւ, « Այս գիրքը յուշագրութիւն մըն է,որ ներկան եւ անցեալը կամրջող ճամբայ մը ունի: Յուշագրութիւն՝հայրենասիրական պատգամով: Ամէն ինչ,վայր,դէմք,պատահար,ընթերցողը կը մղէ հայութեան,անոր արմատներուն,իրաւունքներուն,դատին,պայքարին,ամէն քարի տակէն բոյս մը գտնելու պէս: Հեղինակը պատմութիւնը կը պատմէ,նիւթը սակայն ճարտարօրէն շաղկապելով հայութեան ապագային,մտահոգութիւններուն,պարտաւորութիւններուն եւ մարտահրաւէրներուն հետ»: Պրն, Թաշճեան իր խօսքը եզրափակելով ըսաւ, «Հրայր Ճէպէճեան ինչ նիւթի մասին որ կը խօսի,քիչ մը փիլիսոփայութիւն,քիչ մը մարդակերտում,քիչ մը վերլուծում,քիչ մը գաղափարախօսութիւն,միշտ ալ վերադարձ կը կատարէ հայու արմատներուն,դէմ է ձուլումին,այլասերումին եւ շարունակ կը ձգտի ազգային,կրօնական,քրիստոնէական ինքնութեան պահպանումին»:

Ապա խօսք առաւ գիրքի խմբագիր դոկտ.Արտա Ճէպէճեանը որ ըսաւ: «Հրայրին իւրաքանչիւր յօդուածը ազգագրական փաստաթուղթ մըն է,որ կը փաստէ ոչ միայն հայուն ներկայութիւնը աշխարհի հինգ ցամաքամասերու վրայ,այլ նաեւ կը փաստէ հայուն գոյատեւելու պայքարը,ինքզինք գերազանցելու անխոնջ աշխատանքը,քրիստոնէական հաւատքը պահելու խանդը եւ ազգային դիմագիծը պահպանելու մարմաջը,եւ Հրայրը իսկապէս սփիւռքահայ կեանքերը այսպէս տեսաւ, ուր որ ալ գնաց»:

Վերջին խօսք առնողը եղաւ գիրքի հեղինակ՝դոկտ.Հրայր Ճէպէճեանը: Ան իր շնորհակալութիւնը յայտնեց Սրբազան Հօր,պետական ներկայացուցիչին ու տակաւին բոլոր անոնց որոնք տարբեր ձեւերով օժանդակեցին ձեռնարկին ու գիրքին ծանօթացումին մէջ: Հրայր Ճէպէճեան ապա ներկայացուց պատառիկներ իր ճանապարհորդութիւններէն:« Մենք հայապահպանումի մեծ պատերազմի մէջ ենք, իւրաքանչիւր գաղութ մէկ ճակատամարտ է հայապահպանումի մեծ պատերազմին մէջ: Ճիշդ է որ շատ զոհեր կը խլէ այս հայապահպանումի պատերազմը՝բայց եւ այնպէս պիտի շարունակենք առանց յուսահատելու» ըսաւ ան: Ան ակնարկելով գիրքին կողքի նկարին եւ անոր մէջտեղի ծառի իրականութեանը՝ ըսաւ: «Այս ծառը՝ մեր հայկական ինքնութիւնը՝ պէտք է միշտ դալար պահենք: Ու տակաւին պիտի հաւատանք՝թէ օր մը զայն դարձեալ պիտի ցանենք մեր պապենական հողին վրայ» եզրափակեց Հրայր Ճէպէճեան:

Շնորհահանդէսի աւարտին տեղի ունեցաւ գիրքին օրհնութիւն-արարողութիւնը եւ գինեձօն՝առաջնորդութեամբը Սրբազան Հօր եւ նաեւ աջակցութեամբը Նիկոսիոյ հոգեւոր հովիւ Տէր Մոմիկ Քհնյ. Հապէշեանի:

Ձեռնարկը աւարտեցաւ Սրբազան հօր Պահպանիչով եւ որմէ ետք տեղի ունեցաւ գիրքին մակագրութիւնը:

Թղթակից

## Հոլանտայի Բողոքական Եկեղեցին Անվերջ Շարունակուող Պատարագով կը Փորձէ Պաշտպանել Հայ Ընտանիքը



Աւելի քան մէկ ամիս է՝ Հոլանտայի բողոքական եկեղեցին օր ու գիշեր, շաբաթուան մէջ եօթ օր՝ առանց դադարի, կրօնական ծէս ու պատարագ կը մատուցէ յանուն փախստական հայ ընտանիքի մը, որ կանգնած է արտաքսման վտանգի առաջ:

Հոկտեմբերի վերջէն Թամրազեանները՝ երեք երեխաներու հետ, եկեղեցւոյ ձեղնայարկին մէջ պատսպարուած են՝ ստիպուած, քանի որ դատարանը մերժած է երկրի մէջ օրինական բնակելու անոնց դիմումը: Տեղական լրատուամիջոցները կը գրեն՝ ոստիկանները արտաքսման հրամանը ձեռքին կը հերթապահեն եկեղեցւոյ դռներուն մօտ, սակայն, չեն կրնար ներս մտնել, քանի որ օրէնքը կ՛արգիլէ անոնց աղօթքի ու պատարագի ժամանակ ձերբակալութիւններ իրականացնել:

Ընտանիքի ամենափոքրը՝15-ամեայ Սէյրանը, մէկ ամիս է՝ դպրոց չէ գացած: - «Եկեղեցւոյ մէջ ըլլալով, կը մտածեմ՝ ի՞նչ գործ ունիմ այստեղ: Բայց եթէ այստեղէն դուրս գանք, ամէն պահ կրնան մեզի ձերբակալել», - ըսած է ան:

Իրաւապահներու մուտքը կանխելու եւ շուրջօրեայ ծէսեր կազմակերպելու համար բողոքական փոքրիկ եկեղեցին դիմած է Հոլանտայի ու ողջ աշխարհի քրիստոնեաներուն: Արձագանգը չէ ուշացած. Հաակա եկած են հոգեւորականներ Հոլանտայի տարբեր շրջաններէն, Ֆրանսայէն, Իտալիայէն, Սպանիայէն: Ու հիմա անոնք կամաւորութեան սկզբունքով՝ երկու ժամը մէկ կը փոխարինեն իրար եկեղեցւոյ խորանին մօտ, որպէսզի պատարագը ոչ մէկ վայրկեան չդադարի:

Ընտանիքի հայրը՝ Սասունը, կնոջ եւ երեք երեխաներուն հետ Հոլանտա տեղափոխուած է ինը տարի առաջ՝Մարտի 1-ի արիւնալի դէպքերէն ետք: Կը պնդէ, թէ այդ տարիներուն Հայաստանի մէջ հետապնդման ենթարկուած է իր քաղաքական հայեացքներուն համար:

Հոլանտայի իշխանութիւնը կը փաստարկէ՝ Հայաստանը հիմա անվտանգ երկիր է, ընտանիքը կրնայ անարգել հայրենիք վերադառնալ: 15-ամեայ Սեյրանը, սակայն, որ ծննդավայր Հայաստանէն գրեթէ ոչինչ կը յիշէ, կը խոստովանի՝ Հոլանտան դարձած է իր երկրորդ հայրենիքը, որմէ դուրս կեանքը դժուար կը պատկերացնէ:



# Հայկական Լեգէոնի Արարայի Գրոհը

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ



*Պատիւ Մուսա լեռցի լեռնականներին, որոնք յաղթական կռուից եկած իրենց սուրը պատեան չդրին, ասացին թշնամու դէմ իրենց կռիւը դեռ չի վերջացել, զինէ՛ք մեզ, տարէ՛ք կռուի այնտեղ որտեղ դուք տանուլ տուել ձեր կռիւը:*

*Թրքական վարչապետարանի ընդհանուր տնօրէնիութիւնը երկու հազար չորս թուականին՝ ''Հայ Ֆրանսական Յարաբերութիւնները Օսմանեան Պատմութեան Ընդմէջէն'' գրքի Գ. հատորն էր հրատարակել: Այդ գրքում հրապարակուել էին Օսմաներէն ու ֆրանսերէն փաստաթղթեր՝ 1921-1922 տարիներին ֆրանսացիների հետ հայերի գործակցութեան մասին: Այնտեղ յիշատակուել են ֆրանսական զօրքերի կողմից գրաւուած շրջաններում ապրող քաղաքացիների դէմ իբր Հայ զինուորների կողմից գործադրուած բռնարարքներ: Գրքի մէջ զետեղուած են նաեւ փաստաթղթեր, որտեղ վկայուած են, թէ Հայ զինուորներ յարձակած են Այնթապի, Ուրֆայի, Մարաշի եւ այլ բնակավայրերի մէջ բնակուող իսլամ բնակչութեան վրայ:*

*Ֆրանսական զօրքի մէջ ի՞նչ Հայ զինուորներ: Սուրիա, Կիլիկիա արշաւող ֆրանսական բանակի մէջ ոչ թէ Հայ զիուորներ, այլ՝ Հայկական լեգէոն, առանձին հրամանատարական կազմով հայերի զօրաբանակ: Ո՛չ, նրանք զինուորներ չէին, վրէժի ցասումով բռնկած լեգէոնական մարտիկներ էին, որոնք ցեղին սրտի ցաւի մորմոքը իրենց սրտերում, զէնք էին վերցրել՝ թշնամուն զարկելու: Նրանց գերդաստանների տարեց այրեր, կանայք ու աղջիկներ, մանուկներ մահուան կարաւաններ դարձել, թշնամու յաթաղանները պատռել էին նրանց լանջերը, մարել էին մանչերի նայուածքներում հրեշտակային խինդի ժպիտը, նրանց արեգակունք ակների լոյսի բոցերը, հողի մշակների հորովէլների երգերը: Լեգէոնական մարտիկների ստուար մի մասը դեռ նոր էին իրենց լեռների բարձունքներում յաղթական ճակատամարտեր մղել նրանց դէմ: Կռուի ու վրէժի արեւավառ տենչով, իրենց Վահագնի յաղթանակի ու պատերազմի ոգու արեգակի հուրը սրտերում՝ զինուորի հագուստով զէնքին էին փարել, պիտի արշաւէին Կիլիկիա: Հայը ցանկացաւ նորէն քայլել իրենց անուշ Կիլիկիայի հողին, Հռոմկլայի կաթողիկոսանիստ տաճարում աղօթելու, ունկնդրելու իրենց վարդապետների արեգակի արդար լուսոյ շարականները:*

*Ռազմանաւեր էին խարսխել հայկական ծովածոցի փոթորկած ջրերում, դիմացն էր արեւի հրէ թագի ճակատին ելած լերան գագաթը, նրա կողերից ջրվէժող կանաչը հոսում էր ծովի կապոյտ ջրերին: Կռիւ էր այդ լեռներում, հայու ալէաբորբ հոգու ''Դաւթի Թուր կեծակին'' զարկում թշնամուն: Մոլորակի բազում ազգեր պատերազմում էին, օհ, այդ պատերազմում ողջակիզւում էր արիական մի ցեղի սիրտը: Ռազմանաւերի տէրերը՝ պատերազմող Ֆրանսիա, Անգլիա յանդգնեցին այդ լեռներու ճակատել թշնամուն, ստիպեցին լեռնականներին մարել հրացանների որոտները, լքել իրենց լեռները, գնալ ո՞ւր եւ ի՞նչու:*

*Յիսուն երեք օրերի յաղթական մարտերից յետոյ՝ Եգիպտոս, Փորթ Սայիտ նաւահանգստի միւս ափին Լազարէտտօ առողջապահական աւանի աւազուտներում էին, կանաչ հիւղակների փոխարէն ապաստանել ՀԲԸՄ -ի ջանքերով ձեռք բերուած վրաններում: Վրանաքաղաք էին այն անուանել, վրան-դպրոցներ, վրան-եկեղեցիներ էին: Արեւի վարսերը այրում էին, իրենց լեռների լանջերի արեւը տաքուկ շոյում էր դէպի իրեն երկարած այգիների ծառերի թեւերը, ծիածան զոտի կապում նրա մէջքին, մտածում էին այդ արեւի իրենց երկրի արե՞ւն էր: Խաղաղ էր այդտեղ, ո՛չ այգիներ, ո՛չ ցորեանի ծովեր, ոչ արօր ու մաճկալ, ոչ ալէծուփ լեռների կանաչ լանջեր, ոչ մանուշակի կապոյտ ծովեր, ո՛չ շանթերի կրակալոյսը գրկած Նար Տովինարի անձրեւ, ո՛չ պայթող աղբիւրների ջրերի հնդիւն: Աշխարհի կռիւն էր դեռ մոլեգնում, իրենց սրտերում դեռ չէին մարել հայրենի լեռներում հրացանների պայթիւնների որոտների արձագանգը, իրենց դեռ չաւարտուած կռիւն էին տենչում, իրենց հոգիներում վռէժի բոցեղէն խարոյկն էր:*

*Վրանաքաղաքում աւագանին ժողով էր գումարել, ի թիւս այլ հարցերից, Գաբրիէլ Գազանճեանից, Մարտիրոս Պօյաճեանից ու Սերոբ Գազանճեանից բաղկացած պատուիրակութիւն մը ստեղծել էին: 1916 թուականին ներկայացել էին ֆրանսական զրահանաւի հրամանատար՝ Պընուա Տ'Ազիրի-ին, նրան հաղորդել ֆրանսական բանակին զինուորագրուելու իրենց ցանկութեան մասին: Հրամանատարը խորհրդակցել էր Ֆրանսական նաւատորմում ծառայող ծովային սպայ Տիրան Թէքքէեանի հետ: Տիրան, որ ֆրանսական ռազմանաւերով Մուսա լեռցիների փրկութեան սատարողն եղել ու անձամբ ականատեսը այդ կարիճ լեռնականների քաջութեանը, զրահանաւի հրամանատարին թելադրել էր ընդառաջել նրանց ցանկութեանը:*

*Տիրան Թէքքէեանի կողմից խմբագրուած զգայացունց դիմումնագիրը զրահանաւի հրամանատարը ուղարկել էր Ֆրանսա պետական նախարարին: Վրանաքաղքի աւազուտների բացատներում Մուսա լեռցի երիտասարդները սկսել էին զինուորական մարզանքների ու զինավարժութեան փորձեր կատարել: Ֆրանսական կառավարութիւնը անսացել էր լեռնականնեի խնդրանքին, Փորթ Սայիտ ուղարկել գնդապետ Ռոմիիօին, յանձնարարել ''Արեւելեան Լեգէոն'' կազմելու հնարաւորութիւնը ուսումնասիրել: Այդպէս էին ցանկացել անուանել նոր զօրագունդը, սակայն յետագային համարեայ ամբողջութեամբ հայերով համալրուած լինելով այն վերանուանուել էր ''Հայկական լեգէոն'':*

*Վրանաքաղաքի լեռնականների հոգիներում պատերազմի շեփորների հրավառութիւն էր, արեւը գրկած հրացանների սուլիններից ժայթքած կրակը վրէժի ջահեր պիտի վառէր, պիտի կռիւ լինէր, պատերազմի էին գնում: Ցեղի մարտիրոսացած հոգիների ստուերներն էին վրէժի կանչում: Լեգէոնին զինուորագրուել էին վեց հարիւր Մուսա լեռցի լեռնականներ, իրենց լերան կռուի քաջութեան դափնեպսակին փառքի արեւալոյս նոր ծիածաններ պիտի շողային, որոնցից մէկն էլ Կապորալ դարձած հայրս՝ Արմենակ Պօղոս Լագիսեանն էր: Հապա նրանց պատումը գրելիս, ինչքա՜ն եմ նրանց քաջութեան սիրով արբեցել, երեւակայութեանս լուսաճաճանչ շողերին բազմած՝ ես էլ զէնք գրկած նրանց հետ գրոհի գնացել, ափսոս, որ դեռեւս աստղերից իջած չեմ եղել, ես էլ հոգուս հուրի նետերը զարկէի թշնամու դէմքին: Իրենց բնաշխարհից պոկուած Եգիպտահայերի երեք հարիւր հայեր նաեւ զինուորագրուել էին Լեգէոնին: Թրքական բանակի զօրանոցներից, ճանապարհային տաժանակիր աշխատանքից ճողոպրած հարիւրաւոր փախստականներ հասել վրանաքաղաք Հայու զօրագունդին զինուորագրուելու, գնալ զարկելու թշնամուն:*

*Հեռու երկրներ՝ Ամերիկա, ֆրանսա արձագանգել էին Հայկական լեգէոնի շեփորների ղօղանչներին: Այնտեղ հանգրուանած Սեփաստացիներ, Արաբկիրցիներ, Խարբերդցիներ, Վանեցիներ եւ իրենց նախնիների բնաշխարհի այլ աւաններից ու շէներից արեւորդիներ՝ իրենց ցեղակիցների ցաւն իրենց սրտերում, ժամանում Փորթ Սայիտ, զինուորագրուելու նորաստեղծ զօրագունդին: Ամերիկայի հարիւրաւոր քեսապցիներ կարծես վազելով էին հասել Փորթ Սայիտ զինուորական համազգեստ հագնելու, զէնք վերցնելու: Մեսքենէի, Տէր Զօրի ճանապարհներին մահուան երթի իրենց հայրենակիցների տառապանքի կանչերի ցաւը իրենց սրտերում՝ կռուի պիտի գնային, պիտի սլանային թշնամու դիրքեր: Թշնամին մարտի դաշտում թող յանդգնէր մարել հայու ոգու կրակի բոցերը, ոչ թէ մանչերին, ալեհեր մարդկանց, կանանց կարաւաններին տանէին անապատներ: Ամերիկայից եկած 1200 կամաւորների շարքերով կային աստիճանաւոր զինուորականներ, ինչպէս՝ Ճիմ Ջանգալեան, Ռուբէն Հէրեան, Ճոն Շիշմանեան:*

*1915 թուականի Նոյեմբեր, 1916 թուականի Մարտ-Մայիս ամիսներին՝ Անգլիա-Լոնտոն, Անգլիական ու ֆրանսական արտաքին գործերի նախարարներ՝ Սաքս ու Փիքօ, մասնակցութեամբ Նուպար Փաշայի ազգային պատուիրակութեան, երկարատեւ բանակցութիւնների ընթացքում սահմանել էին հարաւ արեւմտեան Ասիայի երկրների ազդեցութեան գօտիները: 1916 թուականի Մայիսի 16-ին կողմերի միջեւ կնքուել էր համաձայնագիր: Նրանով Անգլիային վերապահուել վերահսկողութիւն սահմանել Միջերկրական ծովի ու Յորդանան գետի միջեւ տարածութեան երկրների, իսկ Ֆրանսային վերապահուել վերահսկողութիւն սահմանել Թրքական նեղուցների ու Հայաստանի նկատմամբ: Ըստ համաձայնագրի, Ֆրանսա ու Անգլիա իրաւասու պիտի լինէին որոշելու իրենց ազդեցութեան գօտիների երկրների պետական սահմանները: Սահմանուել էր Օսմանեան տիրապետութեան արաբական նահանգների կարգավիճակը, արաբական թերակղզինը առանձին: Անգլիայի վերահսկողութեան տարածքների առանձին երկրների կարգավիճակը որոշուել էր Յորդանանի բլուրներից մինչեւ ներկայ Թուրքիայի (առանց Ալեքսանդրէթի գաւառի) սահմանները եղող երկրներ՝ Պաղեստին, Յորդանան, Իրաք, իսկ Ֆրանսային նաեւ ''Լեւանդ'' երկրներ՝ Լիբանան ու Սուրիա: Օսմանեան կայսրութեան տարածքի անուղղակի բաժանումն էր այն: Հայկական պատուիրակութեան հետ կողմերի միջեւ կայացած համաձայնութեամբ վաւերացուել էր Հայկական լեգէոնի կազմութիւնը, Ֆրանսայի կողմից Կիլիկեան գրաւելուց յետոյ, նրա հովանաւորութեամբ այնտեղ հիմնադրուէր ինքնավար Հայաստանի իշխանութիւն: Լեգէոնը իրաւասում էր պատերազմել միայն Թուրքիայի դէմ, այն նուաճուելուց յետոյ դառնար ինքնավար Կիլիկիայի պետական զօրաբանակի հիմքը::*

*Զինուորագրուած Հայ արեւորդիներին տարել էին Կիպրոս կղզու Մոնարկա վայրը: Լեգէոնական Արմենակ Պօղոս Լագիսեան հայրս պատմում, իրենց տարել ֆրանսական ծագումով, Լուսինեան տոհմից Կիլիկիայի Լեւոն VI Թագաւորի բերդի տարածք: Մարզումների ատեն ֆրանսական սպան դիմելով նրանց ասել՝ այս ամրոցում, Կիլիկիայի Լեւոն Թագաւորի սխրանքների արձագանգներն են թեւածում, ձեր նախնիների ոգու հուրը սրտերում, պատրաստուէք զէնքով մուտք գործելու Թագաւորանիստ Սիս քաղաքի ամրոց:*

*Ամրացել էին լեգէոնականները, տիրապետում նոր զէնքերին: Նրանց տարել էին Պաղեստին, խրամատաւորուել Երուսաղէմից 50 կ.մ. հիւսիսի Արարայի (Նաբլուս) բարձունքի դիմաց: Արարայի բարձունքում դիրքաւորուած էր օսմանեան ''Յիլտրիմ-Yildrim" բանակը՝ հրամանատարութեամբ Գերման նշանաւոր զօրավար՝ Otto Liman Von Sanders-ի, բաղկացած թուրք-գերման զինուորներից, ճակատի հրանատարն էր Աթա Թուրք: Էնվեր ու գերմանական զօրվարը յոխորտացել էին, իրենց դիրքերը անառիկ ու անընկճելի էին:: Իրապէս այն խիստ ամրացուած էր, ֆրանս-անգլիական զօրախումբի մի*

Շար.ը էջ 19

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Հայաստանը եւ Իտալիան Յայտնուել են EURO-2020-ի Ընտրական Մրցաշարի Միեւնոյն Խմբում




*Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում կայացել է 2020 Թուականի ֆուտպոլի Եւրոպայի առաջնութեան ընտրական փուլի վիճակահանութիւնը: Դրա արդիւնքում Հայաստանի հաւաքականը յայտնուել է J խմբում՝ Իտալիայի, Յունաստանի, Ֆինլանդիայի, Բոսնիա-Հերցեգովինայի եւ Լիխտենշտեյնի ազգային ընտրանիների հետ:*

*Առաջնութեան եզրափակիչ փուլը անց է կացուելու 2020 Թուականի Յունիսի 12-ից Յուլիսի 12-ը:*

*Եւրոպայի յաջորդ առաջնութիւնը տարբերուելու է նախորդներից. EURO 2020-ը հիւրընկալելու են ոչ Թէ մէկ կամ երկու պետութիւններ, այլ մայրցամաքի 20 տարբեր քաղաքներ՝ այդ Թւում Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուն:*

### Հայաստանի Հաւաքականը 101-րդն է ՖԻՖԱ-ի Դասակարգման Աղիւսակում

*ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հաւաքականների նոր վարկանշային աղիւսակը: Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականը, ինչպէս նախորդ ամիս, զբաղեցնում է 101-րդ հորիզոնականը: Մեր ընտրանու ակտիւում կայ 1222 միաւոր:*

*Առաջին տեղում Բելգիայի հաւաքականն է՝ 1727 միաւորով, երկրորդն աշխարհի չեմպիոն Ֆրանսայի հաւաքականն է՝ 1726, իսկ լաւագոյն եռեակը եզրափակում է Պրազիլիայի ընտրանին՝ 1676: Լաւագոյն տասնեակում են նաեւ Խորուաթիայի, Անգլիայի, Պորտուգալիայի, Ուրուգուայի, Շուեյցարիայի, Սպանիայի եւ Դանիայի հաւաքականները:*

## Լիվերպուլը Նուազագոյն Հաշուով Յաղթեց «Էվերթոնին»



*Անգլիայի Պրեմիեր լիգայի 14-րդ տուրում «Լիվերպուլը» «Էնֆիլդում» նուազագոյն հաշուով յաղթեց «Էվերթոնին»:*

*Հանդիպման միակ գնդակը խփուեց երկրորդ խաղակէսին աւելացուած 6-րդ րոպէին: Տանտէրերի կազմում կոլով աչքի ընկաւ Դիվոկ Օրիգին:*

*Այս խաղից յետոյ «Լիվերպուլը» 36 միաւորով զբաղեցնում է մրցաշարային աղիւսակի 2-րդ հորիզոնականը: «Էվերթոնը» 22 միաւորով 6-րդ տեղում է:*

## «Արսենալը» Յաղթեց «Տոտենհեմին». Մխիթարեանը Փոխարինուեց Ընդմիջմանը

*Անգլիայի ֆուտպոլի Պրեմիեր լիգայի 14-րդ տուրի խաղում Լոնդոնի «Արսենալը» սեփական դաշտում ընդունեց «Տոտենհեմին» եւ յաղթեց 4:2 հաշուով:*

*Դաշտի տէրերը չնայած առաջինը բացեցին հաշիւը, սակայն հիւրերը դեռեւս առաջին խաղակէսում երկու կոլ խփեցին եւ առաւելութեան նժարը թեքեցին իրենց կողմը: Ընդմիջմանը «Արսենալի» գլխաւոր մարզիչ Ունայ Էմերին կրկնակի փոփոխութիւն կատարեց, ընդ որում խաղադաշտից դուրս եկաւ նաեւ Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, որն առաջին կէսում ոչնչով աչքի չընկաւ:*

*Թարմ ուժերի ներգրաւումը դրական ազդեց տանտէրերի խաղի վրայ: Նրանք 56-րդ րոպէին վերականգնեցին հաշուի հաւասարութիւնը, ապա 74-77-րդ րոպէների ընթացքում եւս երկու կոլ խփեցին եւ շօշափելի առաւելութիւն ստացան: Երրորդ վճռական գնդակը կազմակերպեցին հենց փոխարինման մտած ֆուտպոլիստները՝ Ռեմզին ու Լիակազետը:*

## Մագնուս Կարլսենը Պահպանել է Աշխարհի Ախոյեանի Տիտղոսը




*Լոնտոնում աւարտուեց շախմատի աշխարհի ախոյեանի համար մրցախաղը: Նորվեգացի գրոսմայստեր 27-ամեայ Մագնուս Կարլսենը ախոյեանական մրցամարտի Թայ-բրեյքում 3:0 հաշուով պարտութեան մատնեց ամերիկացի Ֆաբիանօ Կարուանային եւ երրորդ անգամ պահպանեց շախմատի աշխարհի ախոյեանի տիտղոսը, որը նա կրում է 2013 Թուականից:*

*Թայ-բրեյքը նշանակուել էր 12 դասական պարտիաներում ոչ ոքի խաղալուց յետոյ:*

*Մրցախաղի մրցանակային հիմնադրամն է 1 միլիոն եւրօ է: Կարլսենը կը ստանայ 550 հազար եվրո, Կարուանան՝ 450 հազար:*

*Առաջին անգամ նորվեգացի շախմատիստը տիտղոսը պահպանել է 2014 Թուականին՝ յաղԹելով Վիշվանատան Անանդին, երկրորդ անգամ 2016-ին՝ յաղԹելով Սերգէյ Կարյակինին:*

## ՄՕԿ Նախագահ. Բոլոր Ջանքերը կը Գործադրենք, Որպէսզի Բռնցքամարտը Մնայ Օլիմպիական Ծրագրում

*Միջազգային օլիմպիական կոմիտէի նախագահ Թոմաս Բախը յայտարարել է, որ օլիմպիական շարժման ղեկավար մարմինը շահագրգռուած է բռնցքամարտը 2020Թ. Տոկիոյի Օլիմպիական խաղերի ծրագրից չհանելու մէջ:*

*«Մենք ցանկանում ենք, որ Տոկիոյի Խաղերում լինի նաեւ բռնցքամարտի մրցաշար, եւ մենք բոլոր ջանքերը կը գործադրենք, որպէսզի այն անցկացուի»,- Բախի խօսքը մէջբերում է ՄՕԿ-ի մամուլի ծառայութիւնը:*

*ՄՕԿ-ի գործադիր կոմիտէի նիստում ընդունուել էր յայտարարութիւն 2020Թ. Տոկիոյի Օլիմպիական խաղերում բռնցքամարտի մրցաշարը չանցկացնելու մտադրութեան մասին: Պատճառը Սիրողական բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի (ԱԻԲԱ) նկատմամբ հետաքննութիւնն է կապուած այդ կազմակերպութեան նախագահի ընտրութեան գործընթացի հետ:*

## MLS-ի եզրափակիչում կը հանդիպեն «Ատլանտան» ու «Պորտլենդը»

*MLS-ի եզրափակիչում այս տարի կը հանդիպեն «Ատլանտա Յունայթեդն» ու «Պորտլենդ Տիմբերսը»:*

*Կիսաեզրափակիչում «Ատլանտան» 2 խաղերի արդիւնքում ուժեղ է գտնուել «Նիւ Եորք Ռեդ Բուլզից» (3:0, 0:1), իսկ «Պորտլենդը» յաղԹել է «Սպորինգ Կանզաս Սիթիին» (0:0, 3:2):*

*Յիշեցնենք, որ MLS-ի չեմպիոնի տիտղոսն այս տարի չէր կարողացել պաշտպանել գանատական «Թորոնտոն»:*

## ՊՍԺ-ի Յաղթարշաւն Ընդհատուեց Բորդոյում

*Ֆրանսայի առաջնութեան 15-րդ տուրում չեմպիոն ՊՍԺ-ն հիւրընկալուեց «Բորդոյին» եւ մօտ էր 15-րդ յաղԹանակին առաջնութիւնում, սակայն վերջնամասում կոլ բաց Թողեց եւ բաւարուեց ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:*

*Գերմանացի Թոմաս Տուխելի գլխաւորած Թիմի կազմում աչքի ընկան պրազիլացի Նեյմարը եւ ֆրանսացի Կիլիան Մբապեն:*

*ՊՍԺ-ն 43 միաւորով առաջինն է: Երկրորդ տեղում ընԹացող «Մոնպելյեն» ունի 29 միաւոր: «Բորդոն» 11-րդն է՝ 18 միաւոր:*

## Լիբերտադորեսի Գավաթի Եզրափակիչը կը Կայանայ Սեպտեմբերի 9-ին Մադրիդում

*Արժենտինական «Ռիվեր Փլեյթի» եւ «Բոկա Խունիորսի» միջեւ Լիբերտադորեսի գաւաթի խաղարկութեան եզրափակիչի պատասխան հանդիպումը կը կայանայ Դեկտեմբերի 9-ին Մադրիդի «Ռեալի» տնային ստադիոն «Սանտյագօ Բեռնաբեուում»:*

*Հարավային Ամերիկայի ֆուտպոլային կոնֆեդերացիայի (CONMEBOL) որոշման համաձայն՝ 2 Թիմերի երկրպագուներն էլ կը կարողանան ներկա գտնվել խաղին, յայտնում է CONMEBOL-ի մամուլի ծառայութիւնը:*

*Յիշեցնենք, որ եզրափակիչը յետաձգուել էր, քանի որ հանդիպման օրը «Ռիվեր Փլեյթի» ֆանատները յարձակուել էին «Բոկա Խունիորսի» աւտոբուսի վրայ, ինչի հետեւանքով տուժել էին մի քանի ֆուտպոլիստներ:*

*«Բոկա Խունիորսի» ու «Ռիվեր Փլեյթի» միջեւ եզրափակիչի առաջին հանդիպումն աւարտուել է 2:2 հաշուով: Այս Թիմերն առաջին անգամ են հանդիպում Լիբերտադորեսի գաւաԹի խաղարկութեան եզրափակիչում:*

# Մահախօսական Խօսք՝ Ի Խորոց Սրտի Յաւերժի Ճամբորդին՝ Տոքթ. Գէորգ Քէշիշեանին

ՊԵՐՃ ՉՈԼԱՔԵԱՆ



*Խոր ցաւով իմացայ վաղաժամ մահուան ցնցիչ գոյժը Տոքթ. Գէորգ Քէշիշեանին, եւ ուշ գիշերուան հեւքին մէջ, յուշերով օրօրուն ու կիսարթուն, հոգի ալեկոծող զգացումով ու խոնաւ աչքերով, կը փորձէի թուղթին յանձնել մտօրումներս անցեալի ու երեկոն դարձաւ «տխուր եւ ամայի՝ ինչպէս թաղար մը առանց ծաղիկի...»:*

*Այսօր, հակիրճօրէն կը փափաքիմ՝ մտքիս պրիսմակէն ձեզի փոխանցել Տօքթ. Գէորգ Քէշիշեանի մարդկայնական յատկանիշները, համոզումները ու մանաւանդ սիրոյ գաղափարին նկատմամբ ունեցած իր կեանքի փիլիսոփայութիւնը որ կը կազմէր իր էութեան խորքն ու կորիզը:*

*Բարձր բարոյական սկզբունքներով ու մտաւորական լի պաշարով օժտուած անձ մըն էր Տոքթ. Գէորգ Քէշիշեան: Ոչ միայն մարմնի այլ նոյնիսկ հոգիի բժիշկ էր, սրտի ու մտքի խուզարկող, սիրոյ ու բարիութեան մարմնացում, ազնուական եւ ուղղամիտ ու սուրբի մը նման անսայթաք նկարագրի տէր: Ունէր պատկերաւոր հարուստ բառապաշար, վկայ՝ հեղինակած չորս (4) բժշկագիտական հատորները՝ որոնք լուսաւորեցին միտքերն բոլոր ընթերցասէր հայութեան ի սփիւռս եւ ի Հայաստան աշխարհի...:*

*Ճշմարտախօսութիւնը անջնջելիօրէն դրոշմուած էր իր հոգիին մէջ ու դարձեր բնաւորութեան հիմնական յատկանիշներէն մէկը: Նկարագրով՝ գաղափարապաշտ ու խորապէս սկզբունքային համոզումներու տէր, սիրալիր եւ ազնուասիրտ՝ հաճելի խօսակից մըն էր:*

*Ջէր սիրեր աւելորդ փառաբանութիւնը եւ յաճախ կը կրկնէր աշխարհահռչակ հնդիկ փիլիսոփայ Ռապինտրանաթ Թակորի խօսքը — «Անտեղի գովասանքը վիրաւորանք է...»:*

*Այնքան մաքրամաքուր էր նկարագրով՝ որ երբեմն սակայն, զոհը դարձաւ պարկեշտութեանը... Բայց լաւագոյնս գիտէր գնահատել արժէքներ... Եւ երբ գայրանար, արցունքը ոչ թէ աչքերէն, այլ հոգիէն ու սիրտէն կը հոսէր:*

*Բնաւ չգիջեցաւ վասն շահի ու փառքի- տարակարծութիւններ տեսակէտի՝ հաւանաբար, բայց թշնամիներ՝ երբեք: Տիպար մըն էր համեստութեան ու մարդկային առաքինութիւններու: Շնորհիւ իր անբասիր նկարագրին ու նուիրուածութեան, կը վայելէր սէրն ու համակրանքը իր շրջապատին:*

*Տոքթ. Քէշիշեան՝ այն ինչ որ կը խորհէր եւ կը զգար՝ անվերապահօրէն կ՚արտայայտէր: Բնաւորութեամբ՝ լայնախոհ ու համբերող էր, փափկանկատ եւ թոյլատու, բայց եւ սկզբունքային՝ իր մտածելակերպով, ճշմարտա-խօս եւ պարկեշտ՝ նկարագրով: Ոչ փառասէր էր եւ ոչ ալ փառամոլ, ու բնաւ չեղաւ «չքանչանի մուրացկան մը», կամ համբաւի գնորդը, այլ մնաց միշտ համեստ եւ զգայուն ՄԱՐԴ-ը, խորաթափանց մտաւորականը որ անկաշառ խղճմտանքով կը դիմադրէ ընկերային կեանքի բոլոր զեղծումներուն ու պաշտպան կը կանգնէր բոլոր անոնց՝ որոնք զոհերն էին անարդարութեան:*

*Իբր ամուսին, իբր հայր, իբր մեծ հայր, իբր հայ անձ, գլխագիրով իսկական ՄԱՐԴ-ն էր, բարոյական բարձր սկզբունքներով: Գերագոյն ու հաճելի վայելք էր զինք տեսնելն ու խօսակցիլը... Կեանքը ամբողջութեամբ եղած էր սիրոյ եւ ճշմարտութեան զոհաբերող ծառայութիւն:*

*Տոքթ. Գէորգ Քէշիշեան ամուսնանալով Սէսիլին հետ բախտաւորուած էր երկու պատուական զաւակներով յանձինս Ալէքին եւ Ալինին, ու վեց տասնեակ երկար տարիներու ընթացքին, սիրով ու տենդով եւ հեզասահ ընթացքով կազմեցին հոյակապ եւ սքանչելի ընտանիք մը: Բնաւորութեամբ յարգալիր էր Գէորգ եւ կնամեծար ու Սէսիլը՝ պահապան հրեշտակի մը նման եւ օրինակելի հոգատարութեամբ, անսահման սիրով ու գուրգուրանքով խնամեց իր երկրորդ կէսը՝ մինչեւ իր ամուսնոյն կեանքի աղջամուղջը:*

*Տոքթ. Քէշիշեան բնաւ մինակ չէր զգար, յաճախակիօրէն կ՚ընթերցէր եւ տեղին է շեշտել թէ՝ առանձնութիւնը մտաւորական մարդուն իւրայատուկ պահանջքն ու հաճոյքն է միանգամայն, քանզի հոգեկան ու մտային արժէքներու ամբարումով է որ կը կերտուի գաղափարներու հսկայական համալիրը:*

*Անհունօրէն կը հաւատար սիրոյ գերագոյն զօրութեան: «Սէրը կուռքն էր իր կեանքին, վսեմագոյն ապրումը»: Ատելութիւն բառը գոյութիւն չունէր իր բառարանին մէջ... Կը սիրէր նոյնիսկ հակառակորդն անգամ, սիրոյ գաղափարը պաշտողն էր ան, ու կը հաւատար որ «Ոչ ոք պէտք է ատէ՝ ինչ որ կրնայ սիրել իր հոգին...»:*

*«Ու կեանքի նեկտարը ըմպած սիրոյ գաւաթով», անժամանակօրէն հեռացաւ մեզմէ անձ մը, որուն «ձեռքէն ինկող քարն իսկ՝ կը դառնար հունտ, կուտար ծաղի՛կ ու բուրմունք...»:*

*Հակառակ որ մարեցաւ ճրագը բոցավառող՝ հնչեց զանգը վերջին ու շիջեցաւ շողացող աստղ մըն ալ սփիւռքահայութեան երկնակամարէն: Ան պիտի մնայ փայփայուած գանձ մը՝ մեր հոգիներու թանգարանին մէջ...:*

*Կարօտով զինք պիտի փնտռենք ու յիշենք...:*

*Բիւր յարգանք եւ յաւիտենական հանգիստ հոգիիդ ու փայլփլող լո՛յս յիշատակիդ:*

# Հայկական Լեգէոնի Արարայի Գրոհը

Շարունակուած էջ 17-էն

*քանի գրոհները անզօր եղել այն նուաճելու: Ահա այդ ամրոցը խորտակելու առաջադրանքը վստահել էին Հայ լեգէոնականներին*

*1918 թուականի Սեպտեմբերի 19-ի առաւօտը, արեգակը իր արդար լոյսի շողերի վարսերով ցօղում խրամատները, որտեղ էին թնդանօթները, ծխում էր Արարայի բարձունքը, ֆրանսացի սպայ Ռոմիւօն, ատրճանակը վեր պարզած կրակում էր, "Առաջ" կանչի հետ լեգէոնական մարտիկները խրամատներից դուրս թռել: Գրո՜հ . . . Թէ՜արեգակի շողերին բազմած՝սլացել դէպի հանդիպակաց բարձունքները: Հրացաններից կրակ ժայթքում, արեւին թիկնած սուինները իրենց կրակալոյս ներտերն էին տեղում թշնամու դիրքերին: Գրոհում էին քաջացած լեգէոնականները, Նեմեսիս Դիցուհին՝ վրէժի ոգու հուր ծռում նրանց սրտերին: Անդադրում շարունակում էին իրենց գրոհը դէպի բարձունքի խրամատներ, թշնամին անզօր եղել մարելու արեւի աստուած Միհրի հետ Հայ զինուորի դէպի բարձունք գրոհը, իզուր էր թշնամու զէնքերի գնդակների տեղատարափով կասեցնելու այն: Գերման հրամանատարը ասել էր, որ նման գրոհողները միայն հայերը կարող էին լինել: Արարայի երկնքում կռունկների երամներ անցնում, լեգէոնական մարտիկներ անապատներ քայլող հայերի մնացորդացին խապրիկ ճամբում, որ այդ լեռներում նրանց ցաւի վրէժն էին լուծում թշնամուց, իրենց "յաղթանակ" կանչերը գնում ցեղի հաւերժութեան համար մարտիրոսացած արեւորդիներին հոգիներին որպէս աղօթք ու սփոփանք:*

(Շարունակելի 1)

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՄԱՐԻ (ՊԱՏԱՇԵԱՆ) ՓՈԼԱՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմնի վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր դստեր Քնարիկ եւ Վազգէն Պողարեանին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՄԱՐԻ (ՊԱՏԱՇԵԱՆ) ՓՈԼԱՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր դստեր Քնարիկ եւ Վազգէն Պողարեանին եւ փոխան ծաղկեպսակի կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները:*

| | |
|---|---|
| *Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տեփոյեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան* | *$100* |

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

*Փասատինայի լաւ շրջանի մէջ 2 ննջարան, նստասենեակ, լուացքատուն,* central air conditon*: Հասցէն՝* 1521 N. Hill Avenue, Pasadena, CA 91104*: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել Պօղոսին՝ 626-533-0083 թիւին: Տունը քանի մը աստիճան ցած է,* (step one)*:* No pets, no section 8*:*

## Գործաւոր Կ՚ուզուի

*Փասատինայի մէջ* Gas Station *մը գործաւորի կարիք ունի: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 626-5789200 թիւին:*

**VA Print Media**

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆին



**Vahe Atchabahian**
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ARMENIAN AMERICAN MUSEUM

**Building Together. Leaving a Legacy.**

Կառուցենք միասին: Փոխանցենք Ժառանգութիւն:




## Join the *Groundbreaking Campaign*!



**Permanent Armenian Exhibition**
Հայկական մշտական ցուցահանդէս



**Traveling Multicultural Exhibitions**
Բազմամշակութային շրջուն ցուցահանդէսներ



**Performing Arts Theater**
Կատարողական արուեստի թատրոն



**Demonstration Kitchen**
Ցուցադրական խոհանոց



**Learning Center**
Ուսումնական կեդրոն



**Museum Archives**
Թանգարանի արխիւներ

Քալիֆորնիոյ Հայ-Ամերիկեան Թանգարանը եւ Մշակութային կեդրոնը պատմական շինութիւն է, որ պիտի կառուցուի Կլենտէյլ քաղաքին մէջ: Կեդրոնը կը ներկայացնէ մեր պատմութիւնը, կը պահպանէ մեր մշակոյթը, եւ կը զօրացնէ մեր համայնքը: Մասնակցեցէ՛ք առաջին կարգի այս համաշխարհային եւ Մշակութային թանգարանի եւ Կեդրոնի կառուցումին:

The Armenian American Museum and Cultural Center of California is a historic landmark developing in the City of Glendale. The center will share our story, preserve our culture, and strengthen the community. Take part in building the first world class museum and cultural center of its kind in America. Join and support the Groundbreaking Campaign by contributing today.

**DONATE YOUR $10 TODAY**

# TEXT "MUSEUM" TO 20222

## OR VISIT JOINAAM.ORG

MAILING ADDRESS: 104 NORTH BELMONT STREET, SUITE 205, GLENDALE, CA 91206
The Armenian American Museum and Cultural Center of California is a 501(c)(3) non-profit organization.
Your donation is tax-deductible allowed by law. Federal Tax ID: 47-2465341.